

ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆ  
ՀՈՍԱՆՔՆԵՐ  
ԵՎ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

Հրատարակիչ՝ *Հայաստանի Հանրապետական  
Կուսակցություն*

ԵՐԵՎԱՆ - 2010

*«Չկան մշտական կոնսերվատորներ  
եւ հեղափոխականներ: Իմաստուն գործիչը  
պիտի լինի միաժամանակ թե՛ մեկը, թե՛ մյուսը:  
Ես պահպանողական եմ, երբ վտանգ կա փողոցային  
անարխիայից, հեղափոխական՝ երբ հանրային  
մտածողության ու կյանքի քարացում կա»:*

**Գարեգին Նժդեհ**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## *ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ*

ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ \_\_\_\_\_ 4

1. ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ
2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ

## *ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ*

ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՆ-ՈՒՄ \_\_\_\_\_ 21

1. ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ
2. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
3. ՁԵՎԱԿՈՐՈՒՄ` ԻԲՐԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ
4. «ՆԵՌԿՈՆՆԵՐՆ» ԸՆԴԴԵՄ «ՊԱԼԵՌԿՈՆՆԵՐԻ» ԵՎ ԱՇԽԱՐՀԻ

## *ՄՈՒՇԵՂ ԼԱԼԱՅԱՆ*

ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ \_\_\_\_\_ 41

## ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

### ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

#### 1. ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ընդհանրապես՝ «պահպանողականություն» (կոնսերվատիզմ) հասկացությունը մեկնաբանվում է չորս տարբերակներով.

1. Որպես խառնվածքի տեսակ, որի տարրերն են սովորույթը, մտահոգությունը արմատական փոփոխությունների նկատմամբ եւ իներցիան:
2. Որոշակի իրավիճակներում դրսեւորվող սոցիալական վարքի մոդել, որին հատուկ է հակազդեցությունը կամ դիմադրությունը սոցիալական, տնտեսական, կրոնական, քաղաքական, մշակութային եւ այլ ոլորտներում կատարվող փոփոխություններին:
3. Քաղաքական պահպանողականություն, որն իրենից ներկայացնում է կուսակցությունների եւ շարժումների կողմից իրականացվող ավելի շատ պաշտպանական, քան հարձակողական բնույթի գործողություններ, որոնց հատուկ է ավանդականությունը:
4. Գոյություն ունեցող կարգերի պահպանմանն ուղղված մտածողություն, որը հանդես է գալիս աշխարհայացքային կերպով:

Պահպանողականության պատմությունը սկսվում է 1789 թ. ֆրանսիական Մեծ հեղափոխությունից: Այդ ժամանակներից սկիզբ են առնում պահպանողականության երկու դասական մոտեցումները: Առաջինի հիմքը դրել են Ժ. դե Մեստրը (1753-1821) եւ Լ. դե Բոնալդը (1754-1840), իսկ երկրորդը կապված է անգլիացի Է. Բերքի (1729-1797) անվան հետ: Եթե անգլո-սաքսոնյան երկրներում առավել տարածված է պահպանողականության բերքյան տարբերակը, ապա մայրցամաքային Եվրոպայի երկրներում՝ դրանց յուրահատուկ համադրույթը:

«Կոնսերվատիզմ» հասկացությունն առաջին անգամ քաղաքական բառարան մտավ՝ որպես լուսավորության գաղափարների

եւ 1789թ. ֆրանսիական հեղափոխության նկատմամբ ֆեոդալների եւ ազնվականների կողմից հակադարձվող արձագանքի արտահայտություն:

Առաջին անգամ «կոնսերվատիզմ» տերմինն օգտագործեց ֆրանսիական գրող եւ քաղաքական գործիչ Ֆ. Շատոբրիանը: 1815 թվականից իր կողմից հրատարակվող ամսագիրը Շատոբրիանը կոչեց «Կոնսերվատոր» եւ, հարելով պահպանողական գաղափարների, կարելուր խնդիր համարեց Բուրբոնների դինաստիայի վերականգնումը:

Եվրոպական լուսավորության եւ ֆրանսիական հեղափոխության կողմից առաջ քաշվող անհատականության, առաջընթացի եւ ռացիոնալիզմի գաղափարներին պահպանողականության հիմնադիրները հակադրեցին պետական իշխանության, մասնավորապես թագավորական իշխանության՝ աստվածային բնույթի մասին գաղափարը:

Պահպանողականության կարելուրագույն հասկացություններից է «բնական արիստոկրատիան», որի մեջ, ըստ Բերքի, ընդգրկվում են ոչ միայն ազնվականները, այլ նաեւ հարուստ գործարարները, կրթված անձիք, գիտնականները, դերասանները եւ այլն: Հեղափոխական «անհեթեթություններից» խուսափելու համար, ըստ Բերքի, պետությունը ղեկավարելու իրավունքը պատկանում է ազնվականությանը (ոչ միայն փողով), այլ ոչ թե «սափրիչներին»: Մարդկանց մտավոր եւ ֆիզիկական զարգացման աստիճանների բնական անհավասարությունը պահպանողականությունը համարում է քաղաքականության արքային:

Այդ ժամանակաշրջանին է վերաբերվում նաեւ պետության օրգանական տեսության մշակումը: Համաձայն դրա, պետությունը համեմատվում է անհատներից անկախ գոյություն ունեցող եւ նրանց վրա իշխող էակի հետ:

Պահպանողականության փիլիսոփայության ելակետն է այն դրույթը, ըստ որի մարդու ճակատագրի վրա իր հետքն է թողել նրա «առաջին մեղքը»: Մարդը չի գիտակցում «լավի» եւ «վատի» միջեւ տարբերությունները: Նա ոչ միայն ընդունակ չէ վերափոխել հասարակական կյանքն, այլ նաեւ չպետք է ձգտի դրան: Այդ ձգտումը պահպանողականները համարում են բռնության գործադրում հասարակական զարգացման բնական օրինաչափություն-

ների նկատմամբ: 20-րդ դարի հայտնի պահպանողական Ռ. Կերկը գտնում էր, որ նարդու էությանը պատճառած նման վնասվածքների հետեւանքով հնարավոր չէ աշխարհը վերափոխել նրա իսկ քաղաքական գործունեությամբ: Անհատն, ըստ պահպանողականների, ինքնուրույն կերպով արժեք չի ներկայացնում եւ ամբողջությամբ կախված է պահպանողական կարգ ու կանոնի օժանդակությունից: Պահպանողականների կարծիքով, քաղաքական սկզբունքները պետք է հարմարեցնել ազգային ավանդություններին, սովորույթներին եւ հասարակական-քաղաքական ինստիտուտների արդեն արմատավորված ձևերին: Բերքի խոսքերով, հասարակության նպատակն է ոչ թե թվացող ազատությունների հորինումը, որը հանգեցնում է համընդհանուր անարխիայի, այլ արդեն գոյություն ունեցող, ավանդությունների վրա հիմնված ազատությունների պահպանումը: Պահպանողականների կարծիքով, նախապատվությունը պետք է տալ ոչ թե անգամ կատարյալ թվացող տեսական սխեմաներին, այլ գոյություն ունեցող ինստիտուտներին: Նրանք գտնում էին, որ բնական եւ օրինական է համարվում միայն այն հասարակությունը, որը հիմնված է հստակ ձեւավորված աստիճանակարգության (հիերարխիա) վրա: Վերջինը կոչված է ապահովելու հասարակական օրգանիզմի ամբողջականությունն ու կենսունակությունը:

Պահպանողականության հիմնաքարերից է կրոնի քաղաքական դերի բարձրացման մասին գաղափարը: Քաղաքական եւ հոգեւոր ոլորտների հավասարակշռության հաստատումը Մեստրը հնարավոր էր համարում միայն թեոկրատական մոտեցման կիրառման դեպքում: Բոնալդը, առաջնությունը չտալով ո՛չ աշխարհիկ, ո՛չ էլ հոգեւոր իշխանությանը, առաջ քաշեց քաղաքական եւ կրոնական ոլորտների դաշինք ստեղծելու գաղափարը:

Ի տարբերություն լիբերալիզմի ու սոցիալիզմի, որոնք ձեւավորվել են որպես համապատասխանաբար բուրժուազիայի եւ բանվոր դասակարգի գաղափարաքաղաքական հոսանքներ, պահպանողականությունն ավելի բարդ երեւույթ է: Նա արտահայտում է այն դասակարգերի, ֆրակցիաների եւ սոցիալական խմբերի գաղափարներն ու կողմնորոշումները, որոնց համար պատմական եւ սոցիալ-տնտեսական զարգացման օբյեկտիվ միտումները (հասարակական փոփոխությունները) որոշակի

սպառնալիք են պարունակում: «Պահպանողականություն» հասկացությունն ընդգրկում է հասարակության մեջ արմատավորված, ժամանակի փորձություններով անցած այն արժեքները, որոնք պայմանավորում են բնակչության զգալի հատվածների հոգեբանությունն ու մտածելակերպը:

Պահպանողական արժեքներն ու նորմերը իրենց համախոհներն են գտնում մարդկանց տարբեր խմբերում: Այսպես, պահպանողականությանը կարող են հարել ֆերմերների, խանութպանների, արհեստավորների եւ գյուղական բնակչության այն ներկայացուցիչները, որոնք մտահոգված են անորոշ ապագայի հեռանկարով եւ իրենց սոցիալական կարգավիճակը չեն ցանկանում փոխել հեղափոխությամբ, որը քայքայում է քաղաքական կարգը: Այս առումով պահպանողականությունը հանդես է գալիս դասակարգային էությունից զուրկ՝ կրոնական, սոցիալական փիլիսոփայության տեսքով:

Պահպանողականության իմացաբանական նախադրյալն է այն հանգամանքը, որ հասարակական-քաղաքական գործընթացն ունի երկակի բնույթ: Դրա հիմքում մի կողմից ընկած է էվոլյուցիան՝ հնի հետ կապերի խզումը եւ նորի ստեղծումը, իսկ մյուս կողմից՝ նախկին համակարգի կենսունակ տարրերի փոխանցումը նորին: Պատմական փորձը ցույց է տալիս, որ անգամ արմատական սոցիալական հեղափոխությունները (ֆրանսիական եւ ռուսական) պահպանեցին ազգային ավանդությունների, սովորույթների զգալի մասը, որը կազմում էր ազգային գիտակցության հիմքը: Ինչպես գրում է բրիտանացի տեսաբան Գեյները. «19-րդ եւ 20-րդ դարերի մարդը ոչ թե ուղղակի ինդուստրալիզացվեց, այլ ինդուստրալիզացվեց որպես գերմանացի, ռուս կամ ճապոնացի...»:

Պատմությունը դա արդեն գոյացածի եւ դրան զուգահեռ առաջացող տարրերի միասնությունն է: Պահպանողականներն այդ երկու գործընթացներից նախապատվությունը տալիս են առաջինին: Պահպանողականությունն ընդունում է իրականությունը, հիմնական շեշտը դնելով ավանդական կանոնների, նորմերի, սոցիալական եւ քաղաքական կառուցվածքների ու ինստիտուտների պահպանման անհրաժեշտության վրա:

Պահպանողականների ավանդական վերաբերմունքը դրսևորվում է նաև բարեփոխումների անցկացման հարցում: Դրա համաձայն՝ բոլոր բարեփոխումներն ու փոփոխությունները չպետք է խախտեն բնականոն զարգացման ընթացքը, այլև ուղիներ պետք է մշակեն արդիականացման համար: Այդ կապակցությամբ, բարեփոխումները պահպանողականությունը բաժանում է երկու խմբի՝

1. Ավանդական իրավունքների եւ սկզբունքների վերականգնմանն ուղղված բարեփոխումներ:

2. Հեղափոխության կանխմանն ուղղված բարեփոխումներ:

Ընդ որում, հաճախ առաձնացվում են «բարեփոխում» եւ «վերափոխություն» հասկացությունները: Վերափոխումն, ըստ պահպանողականների, ձեւափոխում է օբյեկտի եւությունը, իսկ բարեփոխումը, համարվելով անխուսափելի, չի դիպչում օբյեկտի արմատներին: Բարեփոխումը պահպանողականությունը գնահատում է որպես «անխուսափելի չարիք», որն անհրաժեշտ է անցկացնել «վերելից»՝ աստիճանաբար եւ առանց շտապողականության, այլ ոչ թե «ամբոխի մեթոդներով»՝ «ներքելից»:

19-րդ դ. երկրորդ կեսից պահպանողականության զարգացման հիմնական միտումը բնորոշվում է դրամատերերի եւ ազնվականության միջեւ կնքված դաշինքով: Դրա հետ մեկտեղ առաջ է գալիս պահպանողականների մի խումբ, որը ձգտում է ընդլայնել այդ գաղափարախոսության սոցիալական հիմքը՝ տարածելով այն գյուղացիների, արհեստավորների եւ առևտրականների միջավայրում: Սոցիալական ուղղվածությամբ աչքի են ընկնում 1841-1846թթ. Անգլիայի պահպանողական կառավարության ղեկավար Ռ. Փիլի, Գերմանիայի կանցլեր Օթթո ֆոն Բիսմարկի բարեփոխումները: Նրանք համարում էին, որ պահպանողականներն ավելի հեշտությամբ կարող են հաղթահարել սոցիալական պրոբլեմները, քան լիբերալները: Սակայն սոցիալական քաղաքականությունն իրենց կողմից դիտվում էր ոչ թե որպես սոցիալական ապահովության համակարգի ստեղծում, այլ՝ պետության բարեգործություն: Այս ժամանակաշրջանում որոշ գաղափարների ընդունումով (ազատ շուկայական հարաբերություններ, ներկայացուցչական համակարգի զարգացում, իշխանության մարմինների ընտրություն, պառլամենտարիզմ, քաղաքական եւ գաղափարախոսական պլյուրալիզմ, անհատականության զար-



գացում եւ այլն) պահպանողականութիւնն ընդհուպ մոտեցավ դասական լիբերալիզմին:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո պահպանողականության միջազգային կենտրոնը Եվրոպայից տեղափոխվեց ԱՄՆ: Պահպանողականության զարգացման խնդիրն այստեղ իր վրա վերցեց մտավորականների մի խումբ, որը պատկանելով ակադեմիական միջավայրին՝ սերտ կապերի մեջ էր գործարար աշխարհի ու քաղաքական ոլորտի գործիչների հետ: Այս խմբի մեջ էին մտնում ԱՄՆ ապագա պետքարտուղար Յ. Քիսինջերը, հայտնի քաղաքական գործիչ Ռ. Բաթլերը եւ ուրիշներ:

Ցանկանալով հաղթանակած դուրս գալ սառը պատերազմից եւ «ծախ» հեղափոխական ուժերի դեմ պայքարից, ամերիկյան պահպանողականները կրկին վեր հանեցին Է. Բերքի ժառանգութիւնը: Բավականին տարածված դարձավ այն դրույթը, ըստ որի, համաշխարհային հեղափոխության վտանգը պետք է հաղթահարել ոչ թե դիմելով ավելի ծախ քայլերի, կամ ծայրահեղ աջ հակազդեցության, այլ պահպանելով եւ ամրապնդելով արեւմտյան հասարակութիւնների ազատ հաստատութիւնները: Ըստ այդ գաղափարի կողմնակիցների, համաշխարհային հեղափոխութիւնից դուրս մնացած երկրները ազատութիւնը պահպանելու ճանապարհով միայն կարող են մրցակցել ստեղծված ամբողջատիրական ռեժիմների հետ եւ թուլացնել դրանք:

Կոմունիզմի տարածման վտանգի առջեւ Բերքի կոնսերվատիզմը՝ լինելով ավելի ճկուն, հնարավորութիւն տվեց որոշակի շփման եզրեր գտնել լիբերալիզմի հետ: Դրանով հիմք դրվեց այդ երկու գաղափարախոսութիւնների հետագա համաձայնութեանը:

Միաժամանակ, այս շրջանում է, որ պահպանողականներն ազատ շուկայի պայմաններում ընդունեցին պետության կարգավորիչ դերի անհրաժեշտութիւնը, կոնկրետ պայմաններից ելնելով արդյունաբերութեան որոշ ճյուղերի ազգայնացման հնարավորութիւնը, սոցիալական սպասարկման ոլորտի ընդլայնման կարելորութիւնը, ինչպէս նաեւ փորձեցին արդեն բանվոր դասակարգի միջոցով ընդլայնել պահպանողական կուսակցութիւնների սոցիալական հիմքը:

20-րդ դարի 70-ականներին բարձրացավ ավանդական կողմնորոշում ունեցող աջ պահպանողականութեան դերը: Արեւմտյան

գաղափարախոսության թեքումը դեպի աջ տեղի ունեցավ ձախերի՝ կոմունիստների, սոցիալ-ժողովրդավարների եւ ձախ լիբերալների գաղափարախոսության ճգնաժամի պայմաններում: Դրա հիմնական պատճառը 1973-1974թթ. տնտեսական ճգնաժամն էր, որը պատրանքի վերածեց տնտեսական գործընթացների կարգավորման հնարավորության գաղափարը:

Այդ ժամանակաշրջանում Եվրոպայի մի շարք երկրներում առաջացան պահպանողական կուսակցություններ: Այն, որ բնակչության լայն զանգվածներն ընդունում էին պահպանողականության գաղափարներն ու սկզբունքները, վկայում են Ռ. Ռեյգանի հաղթանակները ԱՄՆ նախագահական ընտրություններում, Անգլիայի պահպանողական կուսակցության ղեկավար Մ. Թետչերի կառավարության երկարատեւ իշխանությունը, խորհրդարանական եւ տեղական իշխանության մարմինների ընտրությունների արդյունքները ԳՖՅ-ում, Իտալիայում, Ֆրանսիայում:

Ընդհանրապես, պահպանողականության կարեւորագույն տարրերից է արմատական գաղափարախոսությունների եւ հասարակական տեսությունների նկատմամբ քննադատական վերաբերմունքը: Մատնանշելով պահպանողականների այդ մոտեցումը՝ քաղաքագետները նկատի ունեն այն, որ պահպանողականները արստրակտ սխեմաներին նախընտրում են պրագմատիզմը եւ կոմպրոմիսը: Նրանք դեմ են բոլոր տեսակի գաղափարախոսությունների բացարձականացմանը, հատկապես՝ գործնականում դրանց կուրորեն կիրառմանը:

Ժամանակակից պահպանողականության, հատկապես նրա աջ թեւի բնորոշ գծերից է հավատարմությունը կրոնական ավանդականությանը: Արդի հասարակության բացասական երեւույթների հիմնական պատճառը նրա կողմից ավանդական արժեքների անտեսումն էր, որոնցից կարեւորագույնը կրոնական արժեքն էր: Պահպանողականության ներկայացուցիչների պնդումով, դրա թերագնահատումը ստիպեց հրաժարվել մարդու «սկզբնական մեղքի» կոնցեպցիայից եւ դիտել նրան որպես «բոլոր երեւույթների չափանիշ»՝ ընդգծելով մարդու միայն բարի բնույթը: Քանի որ, ըստ պահպանողականների, միայն ֆիզիկական եւ զգացմունքային աշխարհը համարվեց միակ իրականը, սկսվեց կրոնի անկումը եւ, դրան զուգահեռ, մատերիալիզմի եւ ռացիոնալիզմի

ազդեցության աճը: Հանդես գալով ավանդականության վերականգնման օգտին՝ պահպանողականներն այդ գործընթացի միջանկյալ ինստիտուտներ են համարում ընտանիքը, համայնքը, եկեղեցին:

Սակայն ավանդական արժեքները ժամանակակից պահպանողականության կողմից տարբեր երկրներում մեկնաբանվում են տարբեր կերպ: Այսպես, ԱՄՆ պահպանողականների մեծամասնությունն իրեն համարում է բողոքական ֆունդամենտալիզմի կողմնակից, մոլեռանդ է եւ թշնամանքով է ընդունում այլախոհությունը: Որոշ արեւմտաեվրոպական երկրների պահպանողականներ հարում են այլ դիրքորոշման: Օրինակ, Գերմանիայի եւ Ֆրանսիայի շատ պահպանողականներ իրենց խնդիրը համարում են հնագույն եվրոպայի ոգու վերածնունդը, որում միախլուսվել էին հունական, լատինական, կելտական, գերմանական եւ սլավոնական մշակույթները: Վերադարձը հնին դիտվում է որպես հեթանոսական եվրոպայի արժեքների վերակենդանացում: Նրանց կարծիքով քրիստոնեական մոնոթեիզմը հավասարեցնում է բոլոր հավատացյալներին, հեղափոխական երանգներ տալիս եվրոպական գիտակցությանը: Հեթանոսությունը գայթակղում է իր պոլիթեիզմով, որը, պահպանողականների կարծիքով, հիմք է հանդիսանում պլուրալիզմի համար:

Ի տարբերություն լիբերալների, որոնք մարդուն դիտում են որպես շղթայված, բայց ազատության արժանի էակ, պահպանողականները գտնում են, որ քաղաքացիական ազատությունները պետք է խարսխվեն հենց ավանդությունների եւ պատմական հաջորդականության շղթաների վրա: Պահպանողականների աչքում պետությունը օրենքի եւ բարոյականության պաշտպանն է: Առանց ուժեղ պետության հասարակությունը կարող է հայտնվել անարխիայի գրկում: Սակայն, ուժեղ պետությունը կարող է գործիք դառնալ անհատական ազատությունը ճնշելու համար: Այդ պատճառով պահպանողականության տեսաբանները ընդգծում են մարդկանց ավելի փոքր միավորումների ձեւավորման կարելությունը, որոնք կազդեն պետության վրա: Միաժամանակ, նրանց կարծիքով, հասարակական կազմակերպությունները չպետք է աչքի ընկնեն բարձր քաղաքական ակտիվությամբ եւ դրանով հակադրվեն կուսակցություններին կամ խորհրդարանին: Սակայն

անհրաժեշտ է ընդլայնել այդ կազմակերպությունների լիազորություններն իրենց գործունեության ոլորտներում, որպեսզի տվյալ բնագավառները հնարավորինս զերծ մնան պետության միջամտությունից:

Ըստ պահպանողականների, մարդու իրավունքները կրում են միաժամանակ բնական եւ սոցիալական բնույթ: Բնական՝ որովհետեւ մարդը ստեղծված է Աստծո կողմից որպես բնության կարելորագույն տարրերից մեկը եւ սոցիալական՝ որովհետեւ իր իրավունքները մարդը կարող է օգտագործել միայն կազմակերպված հասարակության շրջանակներում:

Այն դեպքում, երբ պահպանողականները կանգնում են անհատ կամ հասարակություն երկընտրանքի առաջ, նրանք նախապատվությունը տալիս են երկրորդին: Նրանց կարծիքով, առանձին անհատի իրավունքները երաշխավորված են այնքանով, որքանով որ նա պատկանում է այս կամ այն (պատմական, էթնիկական եւ այլն) հանրույթին:

## **2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ**

Ընդհանուր առմամբ, ժամանակակից պահպանողականության մեջ, իբրեւ որոշակիորեն ուրույն հոսանքներ, կարելի է առանձնացնել ավանդականներին, լիբերտարիստներին եւ նեոպահպանողականներին:

### **ա) Ավանդական (դասական) պահպանողականություն**

Պահպանողականության հոսանքներից պատմականորեն առաջինը ձեւավորվել է ավանդական թեքումը: Դրա ակունքներն արտահայտված են Բերքի, Մեսթրի եւ Բոնալդի կողմից առաջ քաշված դրույթներում: Այդ հոսանքը շեշտը դնում է դասական շուկայական տնտեսության, որոշ դեպքերում անգամ ֆեոդալիզմի սոցիալական կացութաձեւերի եւ բարոյական ավանդությունների պահպանման վրա: Ավանդական պահպանողականության ներկայացուցիչները ավանդությունը կապում են կրոնի հետ: Հավատարմությունը կրոնական դրույթներին նրանց կողմից դրվում է որպես ավանդականության ապահովման կարելորագույն միջոց-

ներից մեկը: Կրոնի միջոցով ավանդականները ցանկանում են համերաշխություն հաստատել հասարակության բոլոր խմբերի միջև: Սոցիալ-տնտեսական պրոբլեմները շատ անգամ նրանք աշխատում են տեղափոխել կրոնաբարոյական հարթություն:

Ի տարբերություն նոր աջերի եւ նեոպահպանողականների, ավանդականները շեշտը դնում են ոչ թե հասարակական կյանքում պետության միջամտության չափը որոշելու վրա, այլ պետականության դրսեւորման կարեւոր չափանիշ են համարում խիստ կարգապահության եւ իշխանության հեղինակության արմատավորումը: Նման կարծիքի են, օրինակ, անգլիական ավանդական պահպանողականները՝ իշխանությունը համարելով բոլոր ազատությունների նախադրյալը. նրանք առաջնակարգ տեղ են տալիս կարգ ու կանոնի հաստատմանը, կարգապահությանն ու իշխանության հեղինակությանը եւ ժամանակակից «արտադրողական հասարակություն»-ը դիտարկում են որպես համընդհանուր հնազանդության հասարակություն, որտեղ ռեալ ազատություններն ապահովվում են միայն ուժեղ պետության առկայությամբ:

Ավանդական պահպանողականության կոնցեպցիաները հանգում են մարդկանց կամքից անկախ գոյություն ունեցող բնական օրենքի նկատմամբ հավատի եւ այն հանդգնունքի, ըստ որի, մարդկային հասարակությունն իրենից ներկայացնում է «հոգեւոր միություն», այնպիսին, ինչպիսին է եկեղեցին: Այդ պատճառով հասարակության կենսունակությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ապահովել պատմականորեն ձեւավորված ավանդույթների հաջորդականությունը: Հասարակության ձեւափոխումները չպետք է ընթանան արհեստական ճանապարհով, քանի որ դրանք իրականացվում են բնական եղանակով:

## **բ) Լիբերտարիստական պահպանողականություն**

Պահպանողականության լիբերտարիստական հոսանքը դասական լիբերալիզմի 18-19-րդ դարերի ավանդության ժառանգումն է: Այդ տեսանկյունից, լիբերտարիզմը, մի կողմից ընդօրինակում եւ շարունակում է ազատության ձգտումը, իսկ մյուս կողմից, բացառում սոցիալիստական գաղափարների տարածումը: Դրա առաջացումը կապվում է, հետպատերազմյան տնտեսական աճին զուգահեռ, սոցիալիստական գաղափարների նկատմամբ

առաջացող հիասթափության հետ: Լիբերտարիզմի առաջավոր ներկայացուցիչները պնդում են, որ ազատ ձեռներեցության, անհատական եւ ընտանեկան պատասխանատվության էռոզիան հանգեցնում է լճացման եւ չքավորության, որ այդ կապակցությամբ անհրաժեշտ է այնպիսի լիբերտարիստական ավանդությունների վերածնունդը, ինչպիսիք են անհատականության դրսեւորումն ու ազատ շուկայական տնտեսության գոյությունը: Լիբերտարիստական պահպանողականության կողմնակիցները դիտվում են որպես «Նոր լուսավորություն» ժամանակակից ինտելեկտուալ շարժման ներկայացուցիչներ: Այդ շարժումը շարունակում է «Շոտլանդական լուսավորության» ավանդությունները, որի ելակետային դրույթն էր «առելտրային հասարակության» գոյությունը: Սոցիալական կապերի տարածված մոդելն այստեղ համարվում է ազատ հասարակական պայմանագրի կիրառման արդյունքում հաստատված «տեր–աշխատող» կարգը:

Լիբերտարիստները հանդես եկան որպես ազատ ձեռներեցության, կարգ ու կանոնի, օրինականության ավանդական սկզբունքների ջատագովներ: Նրանք դուրս եկան լիբերալ-ռեֆորմիզմի «համընդհանուր բարեկեցության պետության» կոնցեպցիայի դեմ, համարելով այն դեպի սոցիալիզմ տանող ճանապարհ: Լիբերտարիստների կարծիքով, ժամանակակից չարիքների առաջացման պատճառը բնական, Աստծո կողմից շնորհված ազատ շուկայական սկզբունքների անտեսումն է պետության կողմից: Յակադրվելով լիբերալ-ռեֆորմիզմի այն դրույթին, ըստ որի ներկա հասարակարգում անհրաժեշտություն է դարձել տնտեսության պլանավորումը կամ կարգավորումը, լիբերտարիստները պնդում են, որ տնտեսության նկատմամբ իրականացվող բռնությունը, պետական սեկտորի ընդլայնումը, արդյունաբերական առանձին ճյուղերի ծրագրավորումը եւ այլ նման երեւույթներ խախտում են մարդկային կյանքի կարգավորման ամենաբնական ձևերը:

Անհատական անվտանգության, սեփականության պաշտպանության եւ այլ իրավունքներ լիբերտարիստները համարում են անխախտելի եւ անսասան: Նրանց կարծիքով, մարքսիզմը եւ սոցիալ-ժողովրդավարությունը խեղաթյուրել են մարդու իրավունքների իրական կոնցեպցիան: Վերջինները մարդկանց գիտակցության մեջ արմատավորեցին, այսպես կոչված, «պոզիտիվ»

իրավունքները՝ աշխատանքի, հանգստի, արդար աշխատավարձ ստանալու, տանիք ունենալու եւ այլն: Սոցիալական հավասարության մարքսիստական պատկերացումը, ըստ լիբերտարիստների, զրկեց այդ հասկացությունը իրական հումանիստական իմաստից, որովհետեւ հայտարարեց ոչ թե «հավասար հնարավորությունների», այլ «այամանների հավասարության» սկզբունքի գերակայությունը: Դրանով իսկ հարված հասցվեց մասնավոր սեփականության անձեռնմխելիության գաղափարին: Այս հարցում լիբերտարիստների մոտեցումները համընկնում են նեոլիբերալների եւ, ընդհանրապես, աջ լիբերալիզմի ներկայացուցիչների հայացքներին:

Լիբերտարիստներն ամենուրեք հանդես են գալիս պետության մինիմալ սոցիալական քաղաքականության օգտին, ինչն, իրենց կարծիքով, հնարավորություն է տալիս միայն թուլացնել վտանգավոր սոցիալական լարվածությունը: Նրանք կոչ են անում կառավարություններին իրենց ծրագրերի իրականացման գործում ղեկավարվել միայն շուկայի պահանջներով: Կարիքավորների օգնության ծրագրերի իրականացման պատասխանատվությունը նրանք դնում են տեղական մարմինների եւ հասարակական ինստիտուտների վրա (ընտանիքի, դպրոցի, եկեղեցու, կամավոր հատկացումներ կատարող կազմակերպությունների ու անհատների):

Լիբերտարիզմի հիմքում ընկած է այն գաղափարն, ըստ որի մարդը՝ որպես իր կյանքը միանձնյա կարգավորող սուբյեկտ, ազատ է իր գործողություններում: Նրա ազատությունը պետք է սահմանափակվի միայն այն դեպքում, երբ նա միջամտում է մյուսների անձնական կյանքին: Լիբերտարիստները հասարակությունը դիտում են որպես ինքնավար անհատներից կազմված պարզ մեխանիզմ: Այդ պատճառով նրանք կատարյալ են համարում միայն ատոմիստական հասարակությունը, որը հակադրվում է պետությանը:

Լիբերտարիզմը նմանեցնելով դասական լիբերալիզմին, չի կարելի հավասարության նշան դնել այդ երկու հոսանքների միջև: Դրանց քաղաքական գաղափարների սոցիալական բովանդակություններն արմատապես տարբերվում են միմյանցից: Առաջ քաշելով անհատականության եւ ազատ շուկայական հարաբե-

րությունների պահպանման գաղափարները, լիբերտարիստները, միեւնույն ժամանակ, հանդես են գալիս սոցիալական հիերարխիայի պահպանման անհրաժեշտության օգտին: Նրանց կարծիքով, հասարակության մեջ, միակ հնարավոր հավասարությունը «բարոյական հավասարությունն» է, իսկ ժողովրդի ավանդույթների նկատմամբ հավատն ու հարգանքը՝ արդյունավետ քաղաքականության կարեւորագույն լծակ:

### **գ) Նեոպահպանողականություն**

Նեոպահպանողականությունը (լիբերալ-կոնսերվատիզմ) համեմատաբար նոր հոսանք է պահպանողականության մեջ: Դրա առաջացման համար օբյեկտիվ հիմք ծառայեց 1973-1974թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը:

Համաշխարհային ճգնաժամը կասկածի տակ առավ այն դրույթներն, ըստ որոնց, ինչպես տնտեսությունը, այնպես էլ սոցիալական հարաբերություններն ու հասարակության հոգեւոր ոլորտն իրենց մեջ պարունակում են ավտոմատ կերպով գործի դրվող եւ կայունությունն ապահովող համապատասխան տարրեր: Ճգնաժամի հիմնական բովանդակությունը նեոպահպանողականները տեսան պետության անկառավարելիության մեջ, որն առաջացել էր լիբերալիզմի գաղափարներից «հղիացած» քաղաքացիների անհնազանդության եւ իշխանությունների պասիվության պատճառով: Ընդհանրապես, նեոպահպանողականությունը բավականին հաջող համապատասխանեցրեց իր ավանդական արժեքները հասարակության զարգացման հետինդուստրիալ փուլի պահանջներին: Մարդկանց կյանքի ոճերի բազմազանությունը, տեխնիկական միջավայրից նրանց կախվածության խորացումը, կյանքի արագացված տեմպերը, հոգեւոր եւ էկոլոգիական հավասարակշռության խախտումը եւ այլ երեւույթներ ճգնաժամ առաջացրին արեւմտյան երկրների հասարակական կարծիքում, որը կասկածի տակ դրեց եվրոպական քաղաքակրթության առաջնային արժեքներից շատերը: Այս պայմաններում նեոպահպանողականությունն առաջարկեց ընտանիքի ու կրոնի, ինչպես եւ՝ սոցիալական կայունության գերակայությունը: Վերջինն, ըստ նեոպահպանողականների, պետք է հենվի քաղաքացու եւ պետության փոխօգնության, բարոյական փոխադարձ պատասխանատվու-



թյան, պետական կարգ ու կանոնի, մարդու իրավունքների հարգանքի վրա: Այդ սկզբունքները հստակ ուղղված էին հասարակության մեջ զուտ մարդկային գծերի եւ ունիվերսալ բարոյական նորմերի պահպանմանը, առանց որոնց հասարակության տնտեսական եւ տեխնիկական զարգացման ոչ մի աստիճան չի կարող լրացնել մարդկանց մոտ առաջացած հոգեւոր վակուումը: Դրանց պահպանման հիմնական պատասխանատուն, ըստ նեոպահպանողականների, համարվում է անհատը: Այդ գործում նա պետք է հույս դնի, առաջին հերթին, իր կարողությունների, այլ ոչ թե պետության օժանդակության վրա: Դա, անշուշտ, կնպաստի անհատի կենսունակության, ձեռներեցության եւ նախաձեռնության զարգացմանը:

Այս մոդելն արմատապես տարբերվում է լիբերալների մոտեցումներից, ըստ որոնց անհատն ինքնուրույն պետք է գտնի կեցության իմաստը, պայմանագրային հարաբերությունների մեջ մտնի պետության հետ եւ այլն: Նեոպահպանողականների կարծիքով, պետությունը պետք է հենվի բարոյական սկզբունքների եւ հասարակության միասնության պահպանման վրա, ապահովի կարգ ու կանոնի, օրինականության վրա հիմնված անհատի կենսական պայմանները՝ քաղաքական միավորումների ստեղծման հնարավորությունը, քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացումը, հասարակության եւ բնության փոխհարաբերությունների ներդաշնակության պահպանումը եւ այլն: Չնայած, որ քաղաքացու եւ պետության փոխհարաբերությունների նման մոդելի կենսագործման առավել նախընտրելի պայման է համարվում ժողովրդավարությունը, այնուամենայնիվ նեոպահպանողականության տեսաբաններից շատերը (Դ. Բել, Ջ. Բժեզինսկի, Ն. Քրիստոլ եւ ուրիշներ) իրենց ուշադրությունը բեւեռել էին քաղաքականության մեջ քաղաքացիների ներգրավվածության սահմանափակմանը, պետության «սոցիալական ծանրաբեռնվածության» թուլացմանը, էլիտայի պաշտպանության մեխանիզմների կատարելագործմանը: Ընդ որում, նեոպահպանողականության ամերիկյան տարբերակներում հիմնական շեշտը, որպես կանոն, դրվում էր պետականության կատարելագործման ուղիների հայթայթման, իսկ արեւմտաեվրոպական հոսանքներում՝ հասարակության բարոյական

ավանդույթների զարգացման եւ անհատի սոցիալական ակտիվության խրախուսման վրա: Սակայն նեոպահպանողականության բոլոր դրսեւորումների համար ընդհանուրն այն է, որ նա կարողանում է իրականության նկատմամբ ռացիոնալիստական մոտեցումը զուգակցել բարոյական սկզբունքների հետ, եւ առաջ է քաշում սոցիալապես պատասխանատու անհատի եւ քաղաքականապես կայուն պետության փոխհարաբերությունների պարզ բանաձեւը:

Տնտեսական ոլորտում նեոպահպանողականները հանդես եկան որպէս ազատ շուկայի եւ մրցակցության կողմնակիցներ, անհատական ձեռներեցության եւ պետության միջամտության սահմանափակման օգտին: Նման գաղափարներն, իրենց բովանդակությամբ, համարվում են մաքուր լիբերալ: Սակայն, հանդես գալով ազատ շուկայի օգտին, նեոպահպանողականները կտրականապես դեմ են մնան հարաբերությունների փոխանցմանը քաղաքական ոլորտ: Այդ պատճառով նրանք մի կողմից լիբերալիզմի ժառանգորդներ են, իսկ մյուս կողմից՝ դրա հակառակորդներ: Տնտեսական եւ սոցիալական ոլորտներում պետության միջամտության մերժումը նեոպահպանողականների կողմից հիմնավորվում է ոչ լիբերալ մեթոդներով: Նրանց կարծիքով, պետության մնան միջամտությունը խախտում է հետեւյալ ավանդական սկզբունքը՝ յուրաքանչյուր մարդ հույսը պետք է դնի սեփական կարողությունների վրա: Այդ միջամտությունը հյուժում է հասարակությունը, խարխլում նրա ավանդական սոցիալական ինստիտուտները (ընտանիք, համայնք, եկեղեցի):

Գործնականում նեոպահպանողականների քաղաքականությունն ուղղված է պետական ապարատի աշխատակիցների թվի կրճատմանը, կառավարման այն մեթոդների արմատավորմանը, որոնք իրենց արդյունավետությունը ցույց են տվել մասնավոր սեկտորում, մանր բիզնեսի խրախուսմանը, բաժնետիրական ընկերությունների շահույթների բաշխման գործում ընդգրկված մարդկանց շրջանակի ընդլայնմանը, սեփականության ապապետականացմանը եւ այլն:

Նեոպահպանողականների քաղաքական հայացքների համակարգը հենվում է հետեւյալ դրույթների վրա. անհատի ենթարկում պետությանը, ազգի քաղաքական եւ հոգեւոր ընդունակության

ապահովում, պատրաստականություն՝ հակառակորդի նկատմամբ դիմելու ամենաարմատական միջոցների:

Նեոպահպանողականների տեսական համակարգում մեծ տեղ է գրավում իշխանության հիմնահարցը, որը հարկավոր է կարգ ու կանոնի հաստատման համար: Տվյալ դեպքում, իշխանությունն առանձին անհատի կամ մարդկանց խմբի հնարավորությունն է՝ արձագանքելու հասարակական տարբեր իրադրություններին եւ ունակությունը՝ դրանց զարգացման վրա ներազդելու:

Նեոպահպանողականությունը յուրահատուկ մոտեցում է ցուցաբերում նաեւ իշխանությունների տարանջատման հարցին: Նեոպահպանողականների կարծիքով, արդի առաջնային պրոբլեմներից է ոչ թե պետական իշխանության երեք ճյուղերի միջեւ օպտիմալ փոխհարաբերությունների հաստատումը, այլ իշխանության բաժանումը պետության, տնտեսության եւ ՋԼՄ-երի միջեւ:

Նեոպահպանողականները գտնում են, որ ՋԼՄ-երի կողմից հասարակական կարծիքը մանիպուլյացիայի ենթարկելու հնարավորության պայմաններում չի կարելի բացարձականացնել մեծամասնության կամքը: Լիբերալների «ներկայացուցչական ժողովրդավարությանը», որը որոշակի պատմական պայմաններում հանդիսացավ որպես ձախերի նոր քաղաքական կուլտուրայի արտահայտություն, նեոպահպանողականները հակադրեցին «ընտրամիների (էլիտաների) ժողովրդավարական տիրապետության կոնցեպցիան»: Ըստ նրանց, այն պայմաններում, երբ պահանջվում է ակտիվ եւ հստակ քաղաքականության իրականացում, միայն էլիտար կամ սահմանափակ ժողովրդավարությունը կարող է առավել արդյունավետ կարգավորել հասարակական կյանքը:

Նեոպահպանողականության տեսաբանները «ընտրամի» հասկացությունը դիտում են որպես «բարձր որակավորում ունեցող փոքրամասնություն» եւ ամենեւին էլ պարտադիր չեն համարում, որ այն իր մեջ ընդգրկի միայն իշխող դասակարգի վերնախավը: Ընտրամին, ըստ իրենց, ձեւավորվում է առանձին անհատների բացառիկ ունակությունների («անհատական խարիզմայի») դրսևորման հետեւանքով: Ուստի, ընտրամին իր մեջ ընդգրկում է տվյալ հասարակության առավել առողջ ուժերին:

Ըստ նեոպահպանողականների, հասարակության մեջ արարիչ դեր խաղացող ընտրամին որոշակի ուղղություն է տալիս նաեւ

ընդհանրապես պատմության զարգացմանը: Ժողովուրդների պատմությունը նեոպահպանողականները դիտում են որպես ընտրանիների պատմություն:

«Ընտրանիների ժողովրդավարական տիրապետության» տեսությունը վերանայում է նաեւ լիբերալիզմի *հավասարության, արդարության եւ եղբայրության* սկզբունքը, քանի որ դրա կիրառման բոլոր փորձերը ամբողջատիրության առաջացման վտանգ են պարունակում:

Ժողովրդավարության ընդարձակումը, նեոպահպանողականների կարծիքով, հանգեցնում է դարերի ընթացքում հղկված կապիտալիստական ինստիտուտների ապակայունացմանը: Հասարակության բոլոր անդամների ընդգրկվածությունը որոշումների ընդունման գործընթացում համարվում է ոչ միայն ուտոպիական, այլ նաեւ վնասակար:

## *ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ*

### **ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՆ-ՈՒՄ**

#### **1. ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

Ժամանակակից ԱՄՆ-ում պահպանողականությունը հանդես է գալիս որպես երկրի գաղափարական ու քաղաքական կյանքի կարեւոր գործոն, որը զգալի ազդեցություն ունի երկու հիմնական քաղաքական կուսակցություններից մեկի՝ Հանրապետական կուսակցության ներքին եւ արտաքին քաղաքական մոտեցումների վրա: Մասնավորապես, ուժեղ է նրա ազդեցությունը ներկայիս նախագահ Ջորջ Բուշ-կրտսերի վարչակազմի վրա:

Միաժամանակ, պահպանողական գաղափարները եւ արժեքները դրականորեն են ընդունվում բնակչության լայն խավերի կողմից: Վերջին տասնամյակների ընթացքում պարբերաբար կատարվող հարցումների արդյունքները կայունորեն վկայում են, որ երկրի բնակչության շուրջ մեկ երրորդը իրեն համարում է պահպանողական հայացքների եւ արժեքների կրող: Որոշ տարիներ այդ թիվը նույնիսկ անցնում է 40 տոկոսից:

Այս ամենը վկայում է, որ ժամանակակից ԱՄՆ-ը աշխարհի ամենապահպանողական երկրներից մեկն է: Պատահական չէ, որ արտերկրում, մանավանդ Արեւմտյան Եվրոպայում, հասարակական գիտակցության մեջ ամերիկացիների վերաբերյալ գոյություն ունեցող ընկալման ստերեոտիպներից է պատկերացումը նրանց մասին՝ որպես պահպանողական ժողովրդի, ի տարբերություն իրենց՝ եվրոպացիների:

Առաջին հայացքից, եթե հաշվի չեն առնվում ամերիկյան պահպանողականության առանձնահատկությունները, այս ամենը կարող է զարմանալի թվալ. չէ՞ որ ԱՄՆ-ը հիմնադրվել է պահպանողականության հզոր հակառակորդի՝ ազատականության գաղափարախոսության վրա հիմնված հեղափոխության հաղթանակի արդյունքում, իսկ ժողովրդի ընկալումներում իշխում էր առաջընթացի եւ ազատականության հանդեպ անսասան հավատը:

Մինչդեռ, պահպանողականությունը ԱՄՆ-ում զգալի տարբերվում է իր եվրոպական նախօրինակից եւ գաղափարակցից:

Այսպես, եվրոպական եւ հյուսիսամերիկյան պահպանողական մտածելակերպի ընկալումների մեջ գոյություն ունի մի հիմնարար տարբերություն: Ժամանակակից ամերիկացիները անհատի ազատությունը համարում են իրենց հասարակության ավանդական արժեքը, եւ այդ պատճառով այն քաղաքականությունը, որը կարող է մեկնաբանվել որպես անհատի ազատությունների ընդլայնում, հաճախ ընկալվում է որպես պահպանողական: Օրինակ, ԱՄՆ-ում թմրադեղերի օգտագործման սահմանափակումների մեղմմանն ուղղված քաղաքականությունը բնակչության որոշ խավերի, ինչպես նաեւ իրենց պահպանողական համարող շատ կազմակերպությունների կողմից մեկնաբանվում է որպես... պահպանողական, քանի որ դիտվում է անհատի ազատության նկատմամբ սահմանափակումների վերացման քաղաքականության շրջանակներում: Եվրոպայում թմրադեղերի օգտագործման ոլորտում նմանատիպ բարեփոխումների օգտին կարող են հանդես գալ ազատականները, կանաչները, նույնիսկ սոցիալ-դեմոկրատները, բայց ոչ մի դեպքում պահպանողականները:

Ամերիկյան քաղաքական պահպանողականության մյուս առանձնահատկությունը նրա գաղափարական ու կազմակերպական խայտաբղետությունն է: Այն, ի տարբերություն եվրոպականի, դեռեւս չի ձեւավորվել՝ իբրեւ կայուն, լավ մշակված գաղափարական-քաղաքական ուսմունք, հանդես է գալիս հեղիեղուկ տեսքով՝ շատ դեպքերում ձեւափոխվելով եւ ստանալով այլ գաղափարական-քաղաքական ուսմունքներին հատուկ տեսք: Դա վկայում է նրա գաղափարական «դեռահասության» մասին:

Սակայն մերօրյա ամերիկյան պահպանողական կազմակերպությունների, խմբավորումների, վերլուծական կենտրոնների, պարբերականների, ինտերնետային սայթերի թվաքանակը անցնում է երկու հարյուրից, եւ նրանք միմյանց միջեւ մղում են անզիջուն պայքար՝ հավակնելով կրելու «իսկական» կամ «անաղարտ» պահպանողական արժեքների միակ պաշտպանի տիտղոսը: Իրականում, նրանցից շատերը, արձագանքելով քաղաքական կյանքի իրադարձություններին, ժամանակ առ ժամանակ որդեգրում են այնպիսի դիրքորոշում, որը հակասում է պահպանողա-

կանության գաղափարախոսության հիմնարար սկզբունքներին: Այսպես, օրինակ, երբ պարզվեց, որ էժան չինական ապրանքները ներխուժում են ամերիկյան շուկա, ինչը հանգեցնում է ամերիկյան արտադրության ապրանքների դուրսմղմանը եւ աշխատատեղերի պակասեցմանը, ապա շատ պահպանողական կազմակերպություններ սկսեցին հանդես գալ կառավարության կողմից միջամտության ու հովանավորչական քաղաքականության որդեգրման օգտին, ինչը, ըստ էության, հակասում է հենց ամերիկյան պահպանողական քաղաքականության սկզբունքային մոտեցումներին, որի ձեւավորման կարեւոր խթան էր ժամանակին հանդիսացել պայքարը նախագահ Ֆ. Ռուզվելտի՝ շուկայի կարգավորման սկզբունքի վրա հիմնված «նոր կուրսի» դեմ:

Ինչպես արդեն նշվեց, անցյալ դարի 60-ական թվականներից պահպանողական արժեքների կրող է համարվում Յանրապետական կուսակցությունը: Սակայն բացառությամբ Ռ. Ռեյգանի նախագահության տարիների, նույնիսկ իրենց իշխանության շրջանում հանրապետականներին չի հաջողվում համախմբել տվյալ պահին երկրում գործող հիմնական պահպանողական խմբավորումներին: Նույն պատկերն է նաեւ ներկայիս ԱՄՆ-ում. Բուշի քաղաքականության կատաղի քննադատների թվում են նաեւ մի շարք հեղինակավոր պահպանողական կազմակերպություններ ու գործիչներ:

Սակայն վերը նշված խայտաբղետ բազմազանության մեջ գոյություն ունի գաղափարների, ընկալումների ու մոտեցումների մի կորիզ, որը եւ բնութագրական է ամերիկյան պահպանողականության համար:

Դրանց թվում առաջին հերթին անհրաժեշտ է նշել հավատը անհատի պատասխանատվության նկատմամբ: Պետության հիմքը, ըստ պահպանողականների, կազմում է ազատ անհատը, որը պատասխանատու է Աստծո եւ հասարակության նկատմամբ: Միաժամանակ, նրանք դեմ են պետության միջամտությանը տնտեսական եւ սոցիալական կյանքի ոլորտներ:

Ամերիկյան պահպանողականների շրջանում լայն տարածում ունեն քրիստոնեական եւ հուդայական կրոնական, բարոյական արժեքները, որոնք համարվում են ունիվերսալ եւ անվիճելի:

Նրանք կարելու տեղ են հատկացնում ուժեղ իրավապահ համակարգին եւ հանցագործությունների համար խիստ պատիժներին: Ի տարբերություն ազատականների, պահպանողականների քարոզչության մեջ մեծ տեղ է զբաղեցնում կարգուկանոնի պահպանման անհրաժեշտության թեզը: Նրանք հանդես են գալիս նաեւ որպէս հզոր զինված ուժերի եւ բարձր ռազմական ծախսերի կողմնակիցներ: Պահանջում են նաեւ ավելի խստացնել երկրի սահմանների հսկումը:

Տնտեսական ոլորտում ամերիկյան պահպանողականների հայացքները որոշ չափով մոտ են եվրոպական ազատականների մոտեցումներին, նրանք կողմնակից են հարկերի իջեցմանը եւ սովորաբար պահանջում են կառավարության նվազագույն ներգրավվածություն շուկայի կարգավորմանը: Նրանք ընդդիմանում են պետության կողմից բժշկական ապահովագրման ու օգնության լայնածավալ սոցիալական ծրագրերի իրականացմանը:

Ամերիկյան պահպանողականության կարելու պահանջներից է ներգաղթի հնարավորինս սահմանափակումը: Այն, որպէս կանոն, քննադատում է դեմոկրատների՝ ամերիկյան բնակչության էթնիկական առանձին խմբերի գոյությունը պահպանող կամ էլ դպրոցներում բազմալեզու կրթություն թույլատրող քաղաքականությունը: Դեմոկրատների այդ քաղաքականությունը պահպանողականների կողմից բնութագրվում է որպէս ոչ հայրենասիրական:

Ամերիկյան պահպանողականության կարելուրագույն պահանջներից է քաղաքացիների զենք կրելու իրավունքի ապահովումը, ինչը, ըստ նրանց, բխում է սահմանադրությունից: Կարելու տեղ է հատկացվում նաեւ դեմոկրատների որդեգրած համասեռության եւ աբորտների օրինականացման քաղաքականության դեմ պայքարին: Բոլոր պահպանողականները, ընդհանուր առմամբ, համամիտ են ավանդական բարոյական արժեքների պահպանման հարցում, սակայն միմյանցից մեծապէս տարբերվում են այդ արժեքների մեկնաբանության մեջ:

Որոշ թեմաներ, որոնք ժամանակին կարելու տեղ էին զբաղեցնում պահպանողականների գործունեության մեջ, ներկա պայմաններում կորցրել են իրենց այժմեականությունը: Դրանցից է, օրինակ, ռասայական սեգրեգացիայի պաշտպանությունը: Այսօր



ԱՄՆ-ում դժվար թե գտնվի որեւիցե լուրջ պահպանողական գործիչ, որը հանդես գա հասարակական կյանքում սեւամորթների եւ սպիտակամորթների տարանջատման օգտին, թեեւ տասնամյակների ընթացքում այդ հարցը եղել է պահպանողական քաղաքականության կարեւորագույն թեմաներից մեկը:

## 2. ՆԱԽԱՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

Պահպանողականությունն ԱՄՆ-ում եւ ինքը՝ ԱՄՆ-ը, ըստ էության, հասակակիցներ են: Երկրի երկրորդ նախագահ Ջոն Ադամսը համարվում է ամերիկյան պահպանողականության հիմնադիրը: Ադամսի խիստ քննադատական մոտեցումը Ֆրանսիական հեղափոխության հավասարապաշտական տեսությունների նկատմամբ եւ հավատն առ այն, որ մարդկային էակների միջեւ գոյություն ունեցող անհավասարությունն արդյունք է Աստծո արարչագործության եւ դրանով իսկ օրինաչափ է, ինչպես նաեւ նրա պնդումը, որ ծերակուտական կարող է լինել միայն հարուստ եւ կրթված մարդը, տարանջատեցին նրան Ամերիկյան հեղափոխության այլ առաջատար գործիչներից եւ ազդարարեցին նոր քաղաքական գաղափարախոսության ծնունդը ամերիկյան հողի վրա:

Ադամսի կրտսեր ժամանակակից ու գաղափարակից Ալեքսանդր Յամիլտոնը նույնպես սուր քննադատության էր ենթարկում Ֆրանսիական հեղափոխության գործիչներին, սակայն այլ տեսանկյունից: Նա անթույլատրելի էր համարում կրոնական նորմերի անտեսումն ու աթեիզմի քարոզը ֆրանսիացի հեղափոխականների կողմից եւ ընդգծում էր, որ դա հանգեցնում է հասարակության բարքերի անկմանը եւ ընտանիքի քայքայմանը: Բացի դրանից, նա գրում էր, որ ազատության սկզբունքից ոչ պակաս կարեւոր է «կառավարության՝ լավ կազմակերպվածության ու կայունության» սկզբունքը, ինչը հնարավորություն է տալիս ապահովել կարգ ու կանոնը: Քաղաքական կյանքում նա կողմնակից էր ուժեղ նախագահության եւ ուժեղ կենտրոնական կառավարության, իսկ տնտեսական ոլորտում պաշտպանում էր կառավարության միջամտության թեզը:

Ադամսի ու Յամիլտոնի, ինչպես նաեւ նրանց ժամանակակից այլ պահպանողականների աշխարհայացքը մեծապես ձեւավոր-

վել էր բրիտանացի քաղաքական գործիչ ու պահպանողական մտածող Էդմունդ Բյորկի ազդեցության ներքո: Սակայն միաժամանակ նրանց մոտեցումները համահունչ էին հյուսիս-ամերիկյան իրողություններին եւ դրանով իսկ տարբերվում էին Բյորկի դավանած որոշ գաղափարներից: Այսպես, օրինակ՝ նրանց, ինչպես եւ ամերիկացիներից շատերի վրա մեծ էր պոլիտանիստական աշխարհընկալման ազդեցությունը, որն իր ակունքները փնտրում էր Հին Կտակարանի ու Մովսեսի պատվիրանների մեջ:

Ամերիկյան պահպանողականության հաջորդ առանձնահատկությունը, որն ի հայտ եկավ նրա գոյության արդեն սկզբնական փուլում, գաղափարական առումով ոչ այնքան հստակ տարանջատումն էր ազատականությունից. եւ՛ պահպանողականները, եւ՛ ազատականները բարձրագույն արժեք էին համարում անհատական ազատության սկզբունքը, որն ամրագրված էր երկրի սահմանադրության մեջ:

Ընդհանրապես, պահպանողականների առաջին սերնդի գաղափարական գործունեությունը, որն ընդգրկում է շուրջ չորս տասնամյակ՝ 18-րդ դարի 90-ական թթ. մինչեւ 19-րդ դարի 30-ականները, բավական բեղմնավոր էր եւ խորապես ներազդեց այդ հոսանքի ամերիկյան տարբերակի հետագա ձեւավորման ողջ գործընթացի վրա: Նրանց կողմից առաջին անգամ ձեւակերպված մի շարք գաղափարներ ու մոտեցումներ այսօր էլ քննարկվում են տարբեր ուղղություններին պատկանող պահպանողականների շրջանում:

Դեռ ավելին, արդեն այդ փուլում, որը համընկնում է բուն հյուսիս-ամերիկյան պետականության կայացման շրջանի հետ, սկիզբ են առնում ամերիկյան պահպանողականության առաջին ուրույն ուղղությունները. ավանդապաշտական պահպանողականությունն ու ամբողջատիրական պահպանողականությունը: Առաջինի հիմնադիրն է Ջ.Ադամսը, իսկ երկրորդի առաջացումը կապվում է Ա.Համիլտոնի առաջ քաշած ուժեղ կառավարության անհրաժեշտության գաղափարի հետ: Փաստորեն, այդ ուղղությունները լրացնում էին մեկը մյուսին: Այսպես, եթե առաջինի կողմնակիցները արժեւորում էին ավանդական հոգեւոր ու կրոնական արժեքները եւ անգլիական գաղութարարների դեմ պայքարով նվաճված անհատի ազատությունը, ապա Համիլտոնը,

գնալով ավելի հեռու, գտնում էր, որ այդ արժեքները կարոտ են պաշտպանության, որը կարող է ապահովել միայն հզոր եւ կենտրոնացված պետությունը՝ ի դեմս մեծ լիազորություններով օժտված երկրի նախագահի ու հստակ օրենքներով գործող դաշնային կառավարության: Հետաքրքիր է նշել, որ ավանդապաշտական պահպանողական ուղղությունը գոյություն ունի նաեւ մեր օրերի ԱՄՆ-ում, իհարկե, արդիականացված տարբերակով, իսկ Ա. Համիլտոնի որոշ գաղափարներ հոգեհարազատ են նոր պահպանողականության հոսանքի ներկայացուցիչներին:

Ընդհանուր առմամբ, վերը նշված տասնամյակներում պահպանողականությունն ու ազատականությունը ԱՄՆ քաղաքական կյանքում հանդես էին գալիս որպես համահավասար ուժեր, եւ նրանց փոփոխական հաջողություններով ընթացող պայքարով էր պայմանավորված ամերիկյան քաղաքական համակարգի ու քաղաքական մշակույթի կայացման գործընթացը:

Ամերիկյան պահպանողականության ձեւավորման հաջորդ շրջանը 19-րդ դարի 40-ական թթ. մինչեւ 20-րդ դարի 40-ական թթ. ընկած ժամանակահատվածն էր, երբ պահպանողականության քաղաքական հոսանքը հիմնականում դուրս էր մղվել հասարակական պայքարի թատերաբեմից՝ գիջելով իր դիրքերը ազատականությանը: Սակայն, միաժամանակ, այդ շրջանում տեղի ունեցավ պահպանողական մտածելակերպի հետագա հստակեցում, ի հայտ եկավ պահպանողական գաղափարախոսության տեղայնացման երեւոյթը եւ որպես հակազդեցություն երկրում ընթացող գործընթացներին՝ շարունակեցին երեւան գալ պահպանողական մտքի նոր հոսանքներ:

Պահպանողականությունը՝ որպես գաղափարախոսություն, շարունակեց իր վերընթաց ուղին: Երեք կարեւոր պատմական իրադարձություն յուրովի նպաստեցին դրան. հարավային նահանգների պարտությունը՝ 1861-1865թթ. Քաղաքացիական պատերազմի արդյունքում, 19-րդ դարի վերջերին եվրոպական երկրներից ներգաղթողների կտրուկ աճը եւ 19-րդ դարի երկրորդ կեսի-20-րդ դարի սկզբի ինդուստրիալ հեղափոխությունը:

Մասնավորապես, պարտությունից հետո հարավ-արեւմտյան նահանգներում լայն տարածում ստացան նոստալգիական տրամադրությունները նախապատերազմական երջանիկ իդիլիայի

Որպես արտահայտումը գտան «Հարավային հողագործների» խմբակի հրապարակումներում, որի գործունեություններից է մեզ իր «Թագավորի բոլոր մարդիկ» վեպով քաջ հայտնի Ռոբերտ Փեն Ուորենը: «Հողագործները» կոչ էին անում հարավի բնակիչներին չտրվել հյուսիսից եկող նորամուտություններին եւ «հպարտությամբ» պահպանել իրենց ավանդական նիստուկացը:

Եվրոպական տարբեր երկրներից միլիոնավոր վերաբնակների հոսքը եւ նրանց կառավարելի դարձնելու անհրաժեշտությունը հանգեցրին դաշնային կառավարության դերի կտրուկ աճի: Որպես հակազդեցություն՝ առաջացավ ազատական պահպանողականների հոսանքը: Նրանք արտահայտում էին բազմաթիվ ամերիկացիների մտավախությունը առ այն, որ պետության հզորացումը վտանգ է ներկայացնում անհատի եւ հասարակության ազատությունների համար, ինչպես նաեւ վտանգում է շուկայական հարբերությունները: Բնութագրական է այդ ուղղության առաջնորդներից Ալբերտ Նոքի հեղինակած գրքի վերնագիրը՝ «Մեր թշնամին պետությունն է»: Հարկ է նշել, որ ազատականության գաղափարները շրջանառություն ունեն նաեւ ժամանակակից պահպանողականների որոշ խմբավորումների շրջանում:

ԱՄՆ-ում լայն թափ ստացած ինդուստրիալ հեղափոխությունը հանգեցրեց «Առաջադիմականների շարժման» առաջացմանը, որոնք փորձում էին ազատականության դիրքերից գաղափարական հիմնավորում տալ արտադրության ու գիտության ոլորտում տեղի ունեցող կտրուկ տեղաշարժերին ու խթանել նրանց համարժեք ու համընթաց վերափոխումները հասարակական կյանքում: Առաջադիմականները արտահայտում էին հյուսիսարեւմտյան նահանգների քաղաքներում ծեւավորվող միջին դասի շահերը, որն իր գոյությամբ ու բարեկեցությամբ պարտական էր հենց առաջադիմությանը: Այդ շարժման դեմ ընդվզեցին պահպանողական մտածելակերպ ունեցող շատ անհատներ, որոնք իրենց քննադատության թիրախը դարձրին բուն առաջադիմության գաղափարը: Այս հակաառաջադիմականների շարժման ամենափայլուն ներկայացուցիչն էր, թերեւս, Հարվարդի համալսարանի

փիլիսոփայության պրոֆեսոր եւ արեւելյան դասական փիլիսոփայության խոր գիտակ Ջորջ Սանտայանան: Նա՝ քննադատելով առաջադիմականներին ու ազատականներին, մասնավորապես գտնում էր, որ ազատականների համար առաջադիմությունը անվերջանալի փոփոխությունների մի շարան է, որոնց վերջնական նպատակը հայտնի է միայն իրենց՝ ազատականներին...

Այդ շրջանում քաղաքականությունը մեծապես ուղղորդվում էր այնպիսի ազատական գաղափարներ դավանող գործիչների կողմից, ինչպիսիք էին երկրի նախագահներ Թ. Ռուզվելտը, Վ. Վիլսոնը, Ֆ. Դ. Ռուզվելտը: Նրանց համարժեք պահպանողական գործիչ քաղաքականության մեջ այդ տասնամյակների ընթացքում ի հայտ չեկավ: Սակայն պահպանողական գաղափարները կիսում էին այդ հարյուրամյակի ամերիկյան հոգեւոր կյանքի մի շարք կարեւոր ներկայացուցիչներ, որոնք հզոր մտավոր ներուժ ստեղծեցին պահպանողականության համար եւ հնարավորություն տվին նրան՝ անցյալ դարի 40-ական թվականներից մեկ անգամ եւս իջնելու քաղաքական պայքարի թատերաբեմ ու զգալի ազդեցություն ունենալու ԱՄՆ ներքին եւ արտաքին քաղաքականության վրա:

### **3. ՁԵՎԱՎՈՐՈՒՄ՝ ԻԲՐԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ**

Անցյալ դարի երկրորդ կեսն առանձնահատուկ տեղ է գրավում ամերիկյան պահպանողականության պատմության մեջ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այն անշեղորեն ուժեղացնում է իր դիրքերը երկրի հասարակական-քաղաքական կյանքում, ձեռք է բերում կողմնակիցների լայն շրջանակ եւ 60-ական թվականներից՝ որպես հիմնական գաղափարական հայեցակարգ, որդեգրվում է ԱՄՆ երկու հիմնական կուսակցություններից մեկի՝ Հանրապետականի կողմից: Այլ խոսքերով ասած, ձեւավորվում է պահպանողականության գաղափարական-քաղաքական հոսանքը:

Այդ գործընթացի սկզբնավորման համար խթան հանդիսացավ նախագահ Ֆ. Դ. Ռուզվելտի 30-ական թթ. «նոր քաղաքական կուրսը»՝ լայնածավալ տնտեսական ու սոցիալական բարեփոխ-

գումների քաղաքականությունը, որի նպատակն էր մեղմել 20-ական թթ. խոշոր տնտեսական ճգնաժամի ավերիչ հետեւանքները: Բարենորոգումների իմաստն էր ուժեղացնել պետական կարգավորման դերը տնտեսական կյանքում եւ իրականացնել պետական սոցիալական օգնության ծրագրերի մի ամբողջ փաթեթ: Չնայած այն հանգամանքին, որ այդ բարենորոգումները հիմնականում հասան իրենց նպատակին եւ փրկեցին ԱՄՆ տնտեսությունը փլուզումից, սակայն առաջացրին բավական խոր հասարակական դժգոհություն, քանի որ ընկալվեցին որպես ոսնձգություն ամերիկյան տնտեսական համակարգի հիմնասյուններից մեկի՝ տնտեսական կյանքի ոլորտ պետության չմիջամտման սկզբունքի նկատմամբ:

Այս պայմաններում սկսեց ձեւավորվել հետպատերազմյան պահպանողականության կարեւոր ուղղություններից մեկը՝ տնտեսական պահպանողականների ուղղությունը, որոնք, գաղափարական ձեւակերպում տալով այդ դժգոհությանը, քննադատում էին Ռուզվելտի քաղաքականությունը՝ իբրեւ շեղում ամերիկյան ավանդույթներից: Նրանց համար ուղենիշ դարձավ ավստրիացի տնտեսագետ ու քաղաքագետ Ֆ. Ա. Ֆոն Յայելի 1944թ. հրատարակած «Ճանապարհ դեպի ճորտատիրություն» գիրքը, որտեղ հեղինակը ցույց էր տալիս, թե պետության միջամտությունը տնտեսական կյանքին հանգեցնում է ազատության սահմանափակմանը եւ նույնիսկ վերացմանը: Նրա ամերիկյան հետեւորդները, իսպառ մերժելով տնտեսության ոլորտում պետական կարգավորման անհրաժեշտությունը, լայնորեն օգտագործում էին հետեւյալ թեզը. «Պլանավորումը տանում է դեպի դիկտատուրա»:

Տնտեսական պահպանողականների ուղղության շրջանակում մի փոքր ուշ առաջացավ ավելի մեղմ հայացքներ դավանող տնտեսագետների խմբավորում, որի կարկառուն ներկայացուցիչներից էր աշխարհահռչակ տնտեսագետ Միլթոն Ֆրիդմանը: Նրանք գտնում էին, որ սահմանափակ թվով եւ լավ նախապատրաստված որոշ պետական կարգավորման ծրագրեր կարող են լինել օգտակար:

Անցյալ դարի 40-60-ական թվականների պահպանողական տնտեսագետների հայացքները մեծապես նպաստեցին ամերիկյան պահպանողականության երկու հիմնարար սկզբունքների հստակ ձեւակերպմանը. պետության միջամտությունը տնտե-

սական կյանքին պիտի լինի հնարավորինս քիչ, եւ պետական սոցիալական օգնության ծրագրերը պիտի հասցվեն նվազագույնի, ինչը կհանգեցնի հարկերի իջեցմանը եւ կխթանի տնտեսության զարգացումը: Այս սկզբունքների վրա էր հիմնվում նախագահ Ռ. Ռեյգանի տնտեսական քաղաքականությունը, որը ստացավ ռեյգանոմիկա անվանումը: Մասնագետների բնութագրմամբ, ռեյգանոմիկան զգալիորեն նպաստեց ամերիկյան տնտեսության հետագա հզորացմանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեղի ունեցան կարելուր փոփոխություններ միջազգային թատերաբեմի վրա: Խորհրդային Միությունը պատերազմից դուրս եկավ մեծապես հզորացած եւ սկսեց հավակնել գերտերության կարգավիճակի, ինչն ուղեկցվում էր կոմունիզմի գաղափարախոսության տարածմամբ: ԱՄՆ-ը իր հերթին ստանձնեց արեւմտյան աշխարհի առաջնորդի եւ կոմունիզմի դեմ պայքարի առաջամարտիկի դերը եւ իր պատմության մեջ առաջին անգամ սկսեց տանել «համամոլորակային» քաղաքականություն: Այս պայմաններում, պայքարը կոմունիզմի գաղափարախոսության դեմ՝ ԱՄՆ ներքին կյանքում ձեռք է բերում կարելուր նշանակություն: Պահպանողական ուղղվածության գործիչները, ընկալելով կոմունիզմը որպես մեծագույն վտանգ ամերիկյան ապրելակերպի եւ արժեքների համար, կատաղի պայքար ծավալեցին նրա դեմ:

1950-ական թվականներին ասպարեզ է գալիս հակակոմունիստ պահպանողականների մի ստվար խումբ, որոնք այդ տարիներին կարելուր տեղ էին զբաղեցնում երկրի հոգեւոր կյանքում: Նրանք աչքի էին ընկնում իրենց անհանդուրժողական դիրքորոշմամբ ոչ միայն կոմունիստական ու սոցիալիստական հայացքներ ունեցող գործիչների, այլ նաեւ ազատական մտածելակերպը ներկայացնող շատ ինտելեկտուալների եւ քաղաքական, պետական գործիչների նկատմամբ, քանի որ նրանց համարում էին «թաքնված կոմունիստներ» եւ «համաշխարհային կոմունիզմի գործակալներ»: Այդ տարիների աչքի ընկնող հակակոմունիստ պահպանողականներից էր Վ. Չեմբերսը: Նրա գրչին պատկանող «Ականատեսը» գրքույկը, որտեղ նա մեղադրում էր պետական բարձրաստիճան պաշտոնյաներին՝ կոմունիստներին օգնելու մեջ, դարձավ պահպանողականների այդ սերնդի սեղանի գիրքը: Այդ

ուղղության կարելուր ներկայացուցիչներից էր նաեւ Պ. Վիերեկը, որի «Մտավորականների ամոթն ու փառքը» գիրքը լայն տարածում ստացավ պահպանողականների շրջանում: Այստեղ նա մեղադրում էր ամերիկյան հոգելուր էլիտայի շատ ներկայացուցիչների այն բանի համար, որ նրանք անտարբեր են կամ էլ ակամա աջակցում են կոմունիզմի գաղափարախոսության տարածմանը երկրում:

Հակակոմունիստ պահպանողականներն առաջին պահպանողական գործիչներ էին ԱՄՆ պատմության մեջ, որոնք սկսեցին հետաքրքրություն ցուցաբերել արտաքին աշխարհի նկատմամբ: Նրանց հիմնական հակառակորդն էր, իհարկե, համաշխարհային կոմունիզմը, որը նրանք ընկալում էին որպես մեծագույն վտանգ մարդկային քաղաքակրթության համար: Հատկանշական էր նրանց ներկայացուցիչ Ջ. Բըրնհեմի հեղինակած գրքի վերնագիրը՝ «Պայքար հանուն աշխարհի»:

Տասնամյակներ հետո՝ 80-ականներին, հակակոմունիզմի կարգախոսները օգնեցին Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ Ռ. Ռեյգանին հաղթելու նախագահական ընտրություններում: Նրա հաղթանակը նաեւ հակակոմունիստ պահպանողականների գաղափարների հաղթանակն էր: Մեր օրերում պահպանողականների այս թեւի ներկայացուցիչներն են նոր պահպանողականները, որոնք ունեն մեծ ազդեցություն Ջ. Բուշ կրտսերի վարչակազմի արտաքին քաղաքականության վրա:

1940-ական թվականներից սկսած ակտիվ են նաեւ ավանդական պահպանողականները: Նրանք քիչ են հետաքրքրվում քաղաքական անցուդարձով եւ իրենց ջանքերը կենտրոնացնում են պահպանողականության գաղափարական հիմնադրույթների հետագա մշակման ու դրանք հասարակությանը մատչելի դարձնելու վրա: Նրանց անվիճելի առաջնորդն է Ռասել Բըրքը՝ ամերիկյան պահպանողականության ամենահեղինակավոր ներկայացուցիչներից մեկը: Նրա գրչին պատկանող «Պահպանողական միտք» գիրքը ունեցել է տասնյակ վերահրատարակումներ եւ այսօր էլ համարվում է ամերիկյան պահպանողականության հիմնադրույթների առավել ընդգրկուն շարադրանքը: Ռ. Բըրքի ջանքերի շնորհիվ էր, որ պահպանողականությունը վերջնականապես



հաստատեց իր դիրքերը՝ որպես լիարժեք գաղափարական երկրընտրանք ազատականությանը:

1970-ականները նշանավորվեցին պահպանողական հեղինակավոր նոր խմբավորման առաջացմամբ: Նրա անդամները իրենց անվանում էին նոր պահպանողականներ: Այդ խմբավորման առաջնորդներն իրենց հրապարակախոսական ու քաղաքական գործունեությունը սկսել են իբրև ազատականներ ու նույնիսկ դավանել են կոմունիստական գաղափարներ եւ միայն հասուն տարիքում են շրջադարձ կատարել դեպի պահպանողականություն: Այս հանգամանքը իր ազդեցությունն է թողել նրանց հայացքների վրա. օրինակ, նրանք հանդես էին գալիս գրաքննություն մտցնելու օգտին...

Նոր պահպանողականները աչքի էին ընկնում ամերիկյան հոգեւոր ու հասարակական կյանքի շատ կողմերի սուր քննադատությամբ: Նրանք քննադատության էին ենթարկում նաեւ պետական դեպարտամենտը, համարելով որ այն չի կարողանում պատշաճ ձեւով պաշտպանել ամերիկյան ազգային շահերն արտասահմանում: Այդ խմբավորման առաջնորդն էր հայտնի հրապարակախոս Իրվինգ Քրիստոլը, որի խմբագրած «Հասարակական շահ» պարբերականը համարվում էր ամերիկյան պահպանողական լավագույն պարբերականներից մեկը: Նոր պահպանողականների ներկայացուցիչ էր նաեւ հեղինակավոր գիտնական-հասարակագետ Դենիել Բելլը, որի աշխատություններն ինդուստրիալ հասարակությունների զարգացման օրինաչափությունների վերաբերյալ նրան համաշխարհային համբավ էին բերել: Ներկայումս ԱՄՆ-ում մեծ ակտիվություն ցուցաբերող նոր պահպանողականները շարունակում են 1970-1980-ական թթ. իրենց նախորդների ավանդույթները:

Հետպատերազմյան երկու տասնամյակների ընթացքում պահպանողական գաղափարախոսության սոցիալական բազայի աննախադեպ ընդլայնումը՝ այն գրավիչ դարձրեց նաեւ երկրի հիմնական քաղաքական ուժերից մեկի՝ Հանրապետական կուսակցության համար: Հանրապետականների մի խումբ առաջատար գործիչներ, Բ. Գոլդուոտերի ղեկավարությամբ, գտնում էին, որ կուսակցության սոցիալական հենարանը ընդլայնելու նպատակով՝ պահպանողականության հիմնադրույթները պիտի

օգտագործվեն կուսակցության քաղաքականությանը գաղափարական հիմնավորում տալու համար: Նրանց այդ մոտեցումները պայմանավորված էին մասնավորապես այն հանգամանքով, որ Դեմոկրատական կուսակցությունից նախագահներ ընտրված Ջ. Քենեդին ու Լ. Ջոնսոնը, նախագահ Ֆ. Դ. Ռուզվելտի օրինակով, իրականացնում էին սոցիալական բարենորոգումների լայնածավալ ու հավակնոտ ծրագրեր, ինչն առաջացնում էր երկրի բնակչության հիմնական սոցիալական խմբի՝ միջին խավի դժգոհությունը, քանի որ ուղեկցվում էր հարկերի բարձրացմամբ: Բ. Գոլդուոտերի ու նրա կողմնակիցների ջանքերով հաջողվեց հասարակության միջին խավի շատ ներկայացուցիչների մոտ Զանրապետական կուսակցության մասին պատկերացում ձեւավորել, որ նա, պաշտպանելով ամերիկյան ավանդական արժեքները, դեմ է անհարկի բարենորոգումներին: Դրանից հետո, ԱՄՆ Զանրապետական կուսակցությունը համարվում է պահպանողական արժեքներով ու սկզբունքներով առաջնորդվող կուսակցություն: Նրա քաղաքական գործունեության մեջ դա արտահայտվում է մասնավորապես նրանով, որ հանրապետականները, ի տարբերություն դեմոկրատների, խուսափում են իրականացնել լայնածավալ տնտեսական ու սոցիալական բարենորոգումների ծրագրեր, դեմ են տնտեսական կյանքի կարգավորման նպատակով՝ պլանավորման կիրառմանը, հարկերի բարձրացմանը, կողմ են ամերիկյան ավանդական արժեքների պահպանմանը եւ այլն:

Զամոզված պահպանողական գործչի համբավ ձեռք բերած Ռոնալդ Ռեյգանի հաղթանակը 1980թ. նախագահական ընտրություններում եւ դրան հաջորդած հանրապետականների տասներկուամյա կառավարումը տրամաբանական արդյունքն էին վերը նշված գաղափարական ու քաղաքական գործընթացների:

Այսպիսով, արձագանքելով ԱՄՆ հետպատերազմյան շրջանի ներքին ու արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցած կարեւոր տեղաշարժերին՝ պահպանողականությունը դարձավ երկրի հասարակական-քաղաքական կյանքի կարեւոր ու մնայուն գործոն՝ հանդես գալով որպես լիարժեք երկընտրանք ամերիկյան հասարակության մեջ խոր արմատներ ունեցող ազատականությանը: Դրա համար նրան պահանջվեց շուրջ երկու հարյուրամյակ:

#### 4. «ՆԵՈԿՈՆՆԵՐՆ» ԸՆԴԴԵՄ «ՊԱԼԵՈԿՈՆՆԵՐԻ» ԵՎ ԱՇԽԱՐՀԻ

20-րդ դարի վերջին տասնամյակը նշանավորվեց կարեւոր տեղաշարժերով ԱՄՆ հասարակական-գաղափարական կյանքում: Կոմունիզմը, որը տասնամյակներ շարունակ ընկալվում էր որպես ամերիկյան արժեքային համակարգի հիմնական ախոյան, «սառը պատերազմում» Խորհրդային Միության եւ նրա արբանյակ երկրների կրած պարտության հետեւանքով շատ արագ դադարեց որեւիցե վտանգ ներկայացնել: Կոմունիստական գաղափարախոսության ու քաղաքական համակարգի պարտությունը ԱՄՆ մտավորական շրջանակներում մեկնաբանվեց առաջին հերթին որպես ազատական գաղափարների աննախադեպ հաղթանակ: Սկսվեց ազատականության՝ իբրեւ գաղափարական-քաղաքական հոսանքի նոր վերելք, եւ այն որոշ ժամանակ գրավեց գերակայող դիրք պահպանողականության նկատմամբ: Այդ մթնոլորտի արդյունքը եւ միաժամանակ՝ նրա խթանիչն էր Դեմոկրատական կուսակցության թեկնածու Բիլ Բլինթոնի հաղթանակը 1992թ. նախագահական ընտրություններում:

Մինչ ազատական գործիչների մի ստվար խումբ, ընդգրկվելով կառավարման համակարգի մեջ, ջանք էր խնայում նախկին կոմունիստական երկրներում տարածելու ազատական գաղափարները եւ տնտեսավարման ու կառավարման ձեւերը, միաժամանակ «հանդարտեցնելով ու կայունացնելով» նախկին Զարավալավիան, պահպանողականները, ինչպես դա բնորոշ է այդ մտածելակերպի տեր մարդկանց, գործելուց առաջ փորձեցին ըմբռնել եւ մեկնաբանել ստեղծված իրողությունը: Հակակոմունիստական ուղղվածության պահպանողականները փորձում էին գտնել նոր գաղափարական թիրախ, որը պիտի փոխարիներ կոմունիզմին, իսկ «ավանդական» պահպանողականները զբաղված էին ազատականների շլացուցիչ հաղթանակը հակակշռելու ուղիների փնտրտուքով:

Այդ տարիներին տպագրվեցին եւ շատ արագ համաշխարհային ճանաչման արժանացան պահպանողական ուղղվածության հասարակագետներ Ֆրենսիս Ֆուկույամայի ու Սամուել Հանտինգտոնի աշխատությունները, որոնք արտահայտում էին ամե-

րիկյան պահպանողականության շրջանում տարածում գտած՝ միմյանց հաճախ հակադրվող եւ նույնիսկ իրարամերժ մտայնությունները եւ ընկալումները:

Նրանցից առաջինը, կոմունիզմի պարտությունից ու ժողովրդավարական արժեքների լայն տարածում ստանալուց խորապես տպավորված՝ ազդարարեց հակամարտությունների վրա հիմնված գաղափարականացված «դասական» պատմության ավարտը եւ նոր՝ «իդեալական ժամանակների» գալուստը, որի որոշիչ գործոնն է լինելու արեւմտյան լիբերալ-դեմոկրատիայի համանվորակային գերիշխանությունը:

Մինչդեռ երկրորդը, հենվելով նույնաման հիմնադրույթների վրա, եկավ հակադիր եզրակացությունների. ըստ Ս. Հանտինգտոնի՝ գաղափարական հակամարտությունը փոխարինվելու է տարբեր քաղաքակրթությունների միջև հակամարտությամբ:

1990-ական թթ. կեսերին պահպանողականների տեսական պրպտումների շրջանը ավարտվում է, եւ նրանք ակտիվացնում են իրենց քաղաքական գործունեությունը: 1994թ. նրանց աջակցությամբ Հանրապետական կուսակցությունը կարելու հաղթանակ է տանում ընտրությունների ժամանակ եւ իր հսկողության տակ է վերցնում Կոնգրեսը: Պահպանողականների շրջանում տարվող սուր գաղափարական վեճերի պայմաններում առաջին պլան են մղվում երկու խմբավորում, որոնց հետագա տասնամյակի ընթացքում վիճակված էր կենտրոնական դեր ստանձնել ամերիկյան պահպանողականության շրջանակներում:

Այդ երկուսից առավել հզորն ու փորձառուն եւ, ինչպես պարզվեց հետագայում, նաեւ քաղաքական առումով ավելի ճկունը, անտարակույս, նոր պահպանողականների (ճեռկոնսերվատորների) կամ ինչպես նրանց կարճ անվանում են՝ ճեռկոնսերվատորներին էր: Այդ խմբավորման ավագ սերնդի ներկայացուցիչներից մի քանիսը երիտասարդ տարիներին ունեցել էին ձախակողմյան հայացքներ եւ հարել էին ամերիկյան տրոցկիստական շարժմանը, իսկ հետագայում, որդեգրելով հակակոմունիստական ու պահպանողական հայացքներ, նշանակալից դերակատարություն էին ստանձնել երկրի գաղափարական-քաղաքական կյանքում, հատկապես նախագահ Ռ. Ռեյգանի պաշտոնավարման տարիներին: Նրանցից, ինչ խոսք, անհրաժեշտ է

հիշատակել Իրվինգ Քրիստոլին, որը համարվում է նեոկոնների «կնքահայրը»: 1999թ. նա հրատարակեց տասնամյակների ընթացքում գրած հոդվածների ժողովածուն՝ «Նեոկոնսերվատիզմ. մի գաղափարի ինքնակենսագրություն» հավակնոտ վերնագրով:

Նեոկոնների ավելի երիտասարդ սերնդի ներկայացուցիչները, հետելելով ավագներին, աչքի էին ընկնում ծայրահեղ հակակոմունիզմով: Սակայն, ի տարբերության «ծերուկների», նրանք կոմունիզմի փլուզումից հետո բավական արագ կողմնորոշվեցին եւ իրենց գաղափարական քարոզի հիմնական թեման դարձրին աշխարհում ԱՄՆ բացարձակ գերակայության հաստատման գաղափարը: «Երիտասարդ» նեոկոնների առաջնորդն է Իրվինգ Քրիստոլի որդին՝ Վիլյամ Քրիստոլը, որի հրատարակած «Վիքլի Ստանդարտը» համարվում է նեոկոնսերվատորական կարեւորագույն պարբերականը:

1997թ. Վիլյամ Քրիստոլը մի խումբ համախոհների հետ, որոնց թվում էր նաեւ բազմիցս Հայաստան այցելած՝ հետախուզության նախկին սպա Բոյուս Ջեքսոնը, հիմնադրեց «Նախագիծ հանուն նոր ամերիկյան դարի» խոսուն անվանումը կրող վերլուծական կենտրոնը: Այն նպատակ ուներ բաց նամակների, հրապարակային այլ ելույթների կամ վերլուծական նյութերի միջոցով ներազդել Քլինթոնի վարչակազմի արտաքին քաղաքականության վրա, որը նեոկոնների կողմից ընկալվում էր որպես երկչոտ եւ ամերիկյան հզորությանը ոչ սազական, եւ հաղորդել նրան ավելի վճռական բնույթ:

Այդ կենտրոնը գործում է մինչեւ օրս: Նրա աշխատանքներին մասնակցում են ամերիկյան վերնախավի պահպանողական թեւի շատ ականավոր ներկայացուցիչներ, որոնք կիսում են նեոկոնների հայացքները: Մասնավորապես, կենտրոնը ոչ միայն անվերապահորեն պաշտպանում է Բուշ-կրտսերի վարչակազմի քաղաքականությունը Իրաքի նկատմամբ, այլ նաեւ արդարացնում է այն՝ հիմնավորելով իր այդ մոտեցումը աշխարհում ԱՄՆ իշխող դերը ապահովելու անհրաժեշտությամբ:

2000թ. նախագահական ընտրություններում Ջ. Բուշ-կրտսերի հաղթանակից հետո նեոկոնները, օգտագործելով անձնական սերտ կապերը նորընտիր նախագահի ընտանիքի ու փոխնախագահի հետ (օրինակ, Ջեք Բուշը՝ նախագահի եղբայրը, սերտորեն

համագործակցում է վերոնշյալ կենտրոնի հետ) ակտիվորեն ներգրավվեցին հանրապետական վարչակազմի արտաքին քաղաքականության պլանավորման ու իրականացման գործընթացի մեջ: Նրանց ներկայացուցիչները կարելուր պաշտոններ ստացան Պենտագոնում ու Պետդեպարտամենտում, ինչպես նաև երկրի նախագահի ու փոխնախագահի աշխատակազմերում: Ամերիկյան մամուլի պնդմամբ, նախագահ Բուշը գտնվում է նեոկոնների ուժեղ ազդեցության տակ:

Նեոկոնների ճնշման ներքո ամերիկյան արտաքին քաղաքականությունը վերջին տարիներին ստացավ պարզորոշ արտահայտված կայսերապաշտական ուղղվածություն: Նրանք գտնում են, որ Ամերիկան, լինելով ներկայիս աշխարհի միակ գերտերությունը, կարող է իրեն թույլ տալ թելադրել իր կամքը ողջ աշխարհին, այդ թվում նաև դաշնակիցներին եւ ՄԱԿ-ին: Ըստ էության, նեոկոնների գաղափարախոսները առաջ քաշեցին ԱՄՆ՝ կայսրության վերածման եւ աշխարհում այդ կայսրության միանձնյա իշխանության հաստատման հայեցակարգը, իսկ կառավարման բարձր օղակներում պաշտոնավարող նրանց կուսակիցները՝ ահաբեկչության դեմ պայքարի ու աշխարհում ժողովրդավարության հաստատմանը աջակցելու քողի ներքո անցան այդ հայեցակարգի պրակտիկ իրականացմանը:

Այդ հայեցակարգի իրականացման ճանապարհին ԱՄՆ-ը պատերազմի մեջ մտավ Իրաքի դեմ, վատացրեց հարաբերությունները մի շարք կարելուր դաշնակիցների հետ, թշնամացավ մուսուլմանական աշխարհին, մանավանդ՝ արաբական երկրներին, միակողմանի պաշտպանեց Իսրայելին պաղեստինա-իսրայելական հակամարտությունում: ԱՄՆ կերպարը աշխարհում ստացավ հստակ արտահայտված բացասական երանգավորում:

Ավելորդ չէր լինի նշել, որ նեոկոնների մեջ մեծ թիվ են կազմում հրեաները՝ ինչպես հուդայականները, այնպես էլ քրիստոնյաները: Թերեւս, դրանով է գլխավորապես պայմանավորված նրանց անվերապահ աջակցությունը Իսրայելին միջազգային թատերաբեմում, ինչպես նաև սերտ համագործակցությունը ԱՄՆ հրեական լոբբիի հետ: Նրանցից ոմանք, ինչպես, օրինակ, պաշտպանության նախարարության նախկին բարձրաստիճան պաշտոնյա եւ հեղինակավոր Պաշտպանության քաղաքականության

խորհրդի նախկին նախագահ Ռիչարդ Փեռլը, վաշինգտոնյան իշխանական միջանցքներում հայտնի են նաեւ որպես թուրքիայի նվիրյալ բարեկամներ:

Պահպանողական այլ հեղինակավոր խմբավորման ներկայացուցիչներին՝ ի հակադրություն նոր պահպանողականների, անվանում են հին պահպանողականներ (պալեոկոնսերվատորներ) կամ կարճ ձեւով՝ պալեոկոններ: Նրանցից առավել հայտնի գործիչը խմբավորման առաջնորդ համարվող Փաթ Բյուքենենն է: Լինելով տաղանդավոր հրապարակախոս, նա մեծ համբավ էր ձեռք բերել՝ հանդես գալով ամերիկյան ապրելակերպի եւ աշխարհընկալման ավանդույթների անադարտ պահպանման օգտին եւ կատաղի քննադատության ենթարկելով բոլոր տեսակի շեղումներն ու նորամուտությունները: Ի տարբերություն նեոկոնների, նրան չէր հաջողվել աջակցություն ստանալ Հանրապետական կուսակցության կողմից, այդ պատճառով նա 1990-ական թթ. նախագահական ընտրություններում հանդես էր գալիս որպես անկախ պատգամավոր, իսկ 2000թ. նույնիսկ փորձ արեց ստեղծել առանձին պահպանողական կուսակցություն: Պալեոկոնների ավելի երիտասարդ սերնդի ականավոր դեմքերից է «Ամերիկան Կոնսերվատիվ» պարբերականի հրատարակիչ Թաքի Թեոդորակոպուլոսը:

Պալեոկոններն իրենց համարում են «դասական» ամերիկյան պահպանողականության ավանդույթների շարունակողներ, իսկ նեոկոններին մեղադրում են պահպանողական արժեքներին դավաճանության մեջ: Թ. Թեոդորակոպուլոսի պատկերավոր բնորոշմամբ՝ պահպանողական շարժումը ԱՄՆ-ում «առեւանգվել է» եւ վարկաբեկվում է նեոկոնների կողմից:

Իրենց տրամադրության տակ ունենալով բավական մեծ նյութական ու հոգեւոր ռեսուրսներ, որոնք, իհարկե, զիջում են նեոկոնների ունեցածին, նրանք անզիջում գաղափարական պայքար են մղում նեոկոնների դեմ՝ սուր քննադատության ենթարկելով մանավանդ վերջիններիս մոտեցումները արտաքին քաղաքականության հարցերում: Պալեոկոնները, շարունակելով ամերիկյան նախապատերազմյան պահպանողականության ավանդույթները, գտնում են, որ կոմունիզմի պարտությունից հետո ԱՄՆ-ը այլևս անելիք չունի միջազգային թատերաբեմում եւ պիտի

կենտրոնանա իր ներքին խնդիրների վրա. այսպիսով նրանք հանդես են գալիս մեկուսացման քաղաքականությանը վերադարձի օգտին:

Այս առումով, նրանք մեծ հետեւողականությամբ քննադատում են նեոկոնների կայսերապաշտական նկրտումները: Այս առումով հատկանշական է Փաթ Բյուքենենի հեղինակած գրքի վերնագիրը՝ «Ոչ թե կայսրություն, այլ հանրապետություն»: Նա գտնում է, որ նեոկոնների խմբակը դավադրաբար իր ձեռքն է վերցրել ԱՄՆ արտաքին քաղաքականությունը եւ այն ծառայեցնում է իր ցնորապաշտ, իրականության հետ ոչ մի աղերս չունեցող գաղափարների իրականացմանը՝ այդպիսով վտանգելով այդ հզոր պետության հեղինակությունն ու անվտանգությունը: Բյուքենենը եւ այլ պալեոկոններ ընդգծում են, որ նեոկոնների անհանդուրժողական մոտեցումը ոչ միայն թշնամի հայտարարված պետությունների, այլ նաեւ արեւմտավրոպական դաշնակիցների նկատմամբ հանգեցնում է ԱՄՆ իրական մեկուսացմանը: Մասնավորապես, իրաքյան պատերազմի շրջանում պալեոկոնները մամուլում կազմակերպեցին քարոզարշավ՝ ի աջակցություն Ֆրանսիայի հետ դաշնակցային հարաբերությունների վերականգնման, փորձելով այդպիսով մեղմել նեոկոնների կոշտ հակաֆրանսիական դիրքորոշման հետեւանքով սրված հարաբերություններն այդ երկրի հետ:



## ՄՈՒՇԵՂ ԼԱԼԱՅԱՆ

### ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**Չարք**– Այսօր աշխարհում ընդունված գաղափարախոսական ուղղություններից ո՞րն է առավել համահունչ հայ ազգային գաղափարախոսության պահանջներին:

**Պատ.**– Ժամանակակից աշխարհում տարածուն գտած գաղափարախոսական ուղղություններից հայ ազգային գաղափարախոսության պահանջներին, թերեւս, առավել համահունչ է *դասական պահպանողականությունը*:

**Չարք**– Որո՞նք են պահպանողականության հիմնական դրույթները, եւ ինչո՞վ են դրանք տարբերվում այսօր տարածուն գտած նյութ քաղաքական գաղափարախոսություններից՝ սոցիալիզմից (մասնավորապես, սոցիալ-դեմոկրատիզմից) եւ լիբերալիզմից:

**Պատ.**– Ընդհանրապես, «պահպանողականություն» ասել է մարդկության (ավելի շուտ՝ նրա ընտրանու) կողմից դրականորեն գնահատված եւ պատմականորեն արդարացված հիմնարար արժեքների, բարոյական նորմերի պահպանում: Այս իմաստով, հայկական պահպանողականությունը նկատի ունի հազարամյակներից մեզ ավանդված արժեհամակարգի՝ ժամանակի քննությանը դիմացած, մեր պատմական ուղին նախանշած արժեքների պահպանումը: Ու թեեւ ժամանակակից աշխարհում չկա պահպանողականության միասնական ընկալում եւ կան պահպանողական տարբեր հոսանքներ, այդուհանդերձ, կան առանցքային հասկացություններ, ընդհանրական սկզբունքներ, դրույթներ, որ բնորոշ են «պահպանողականություն» երեւույթին առհասարակ: Ըստ այդմ, պահպանողական աշխարհընկալմանը բնորոշ են՝

*Չավատն առ Աստված ու նրա պատվիրանները:*

*Նախապատվություն տալը մնայունին, հավիտենականին (հայրենիք, ընտանիք եւ այլն)՝ ի հաշիվ անցողիկի, ժամանակավորի (պետության կառավարման այս կամ այն ձեւը, հասարակության կազմակերպման որոշ մոդել եւ այլն):*

*Մտածելակերպի կոնկրետությունը՝ համեմատ վերացականությունների:* Վերացական մտային կառուցվածքները, կատարյալ քվացող տեսական սխեմաները խորթ են պահպանողականությանը: Այս առումով, եթե սոցիալիստներն ու լիբերալները, հետեւելով վերացական տեսությունների, օրինակ, իբրեւ պատմության վերջին հանգրվան տեսնում են, համապատասխանաբար, համայնավարական եւ լիբերալ-դեմոկրատական հասարակարգերը, պահպանողականները գտնում են, որ պետք է ընդունել իրերի նախասահմանված բնական կարգը (որն ի սկզբանե արդար է եւ ներդաշնակ) եւ պահպանել այն:

*Ավանդական (ազգային, կրոնական) արժեքների հանդեպ նախանձախնդրությունը:* Պահպանողականները հաճախ մեղադրում են ազատականներին եւ սոցիալ-դեմոկրատներին արտաքին աշխարհի նկատմամբ չափից ավելի բաց լինելու, որոշ առումով՝ կոսմոպոլիտիզմի դիրքերից հանդես գալու (օրինակ՝ օտար ներգաղթողների հանդեպ հանդուրժող լինելու) մեջ, ինչը հանգեցնում է ավանդական արժեքների կորստին, նյութապաշտության եւ հեղուկիզմի ազդեցության աճին:

Ի տարբերություն լիբերալիզմի ու սոցիալիզմի, որոնք ձեւավորվել են որպես, համապատասխանաբար, բուրժուազիայի եւ բանվոր դասակարգի գաղափարաքաղաքական հոսանքներ, պահպանողականությունն իր համախոհներն է գտնում մարդկանց տարբեր խմբերում, որոնք իրերի առկա վիճակը չեն ցանկանում փոխել հեղափոխությամբ եւ անորոշ ապագայի հեռանկարով: Այս առումով, թերեւս, *պահպանողականությունը դասակարգային բնույթ չունի:*

Հատկանշական է դասական պահպանողականության այն հիմնարար մոտեցումը, թե *հասարակության բարելավումը պետք է իրականացվի մասնակի եւ փուլային բարեփոխումների ճանապարհով, եւ ցանկացած բարեփոխում պետք է համապատասխանի հասարակության ավանդական արժեհամակարգին:* Ըստ այդմ, պահպանողականությունը սկզբունքորեն մերժում է հեղափոխականությունը, քանզի այն խախտում է հասարակական կյանքի բնականոն զարգացման ընթացքը: Պահպանողականության խնդիրն է՝ *բարեփոխումների միջոցով կանխել հեղափոխական իրավիճակները:* (Պետք է ասել, որ ամերիկյան նեոկոնները

«մեղանշեցին» հատկապես այս սկզբունքի դեմ՝ հանուն աշխարհի դեմոկրատացման հեղափոխականությունը արտերկրում տարածելով):

Ըստ պահպանողականների, մարդու իրավունքներն իմաստավորված ու երաշխավորված են միայն կազմակերպված հասարակության շրջանակներում: Սա եւս տարբերվում է լիբերալների մոտեցումներից, որոնք գրեթե բացարձակացնում են մարդու իրավունքներն ու ազատությունները՝ այն հաճախ հակադրելով հանրային շահերին:

Պահպանողական արժեհամակարգում առանցքային տեղ ունեն հետևյալ հիմնական հասկացությունները.

*Ավանդական ընտանիք:* Պահպանողականները բացասական վերաբերմունք ունեն պաշտոնապես չգրանցված զույգերի, միասեռական զույգերի, մանավանդ վերջիններիս պաշտոնապես գրանցելու եւ երեխաներ որդեգրելու իրավունքի նկատմամբ: Պահպանողականությունն ընդունում եւ արժեւորում է միայն «դասական» ընտանիքը:

*Կրոնական կյանք:* Պահպանողականները ընդունում են սովյալ հասարակության մեջ ավանդավորված կրոնական կյանքի նորմերը եւ սովորույթները՝ դրանց հետեւելը համարելով առողջ քաղաքական ու հասարակական կյանքի կարելիոր նախապայման: Նրանք խիստ բացասական վերաբերմունք ունեն տարբեր տեսակի աղանդների նկատմամբ: Հասարակական եւ քաղաքական կյանքում կրոնի դերի մասին իր տեսակետով պահպանողականությունը էապես տարբերվում է լիբերալիզմից եւ սոցիալիզմից:

*Բարոյական նորմերի հաստատուն համակարգ:* Պահպանողականները հավատում են, որ գոյություն ունի Աստծո կողմից մարդուն տրված բարոյական նորմերի հաստատուն համակարգ, որին հետեւելը ինչպես անհատի, այնպես էլ հասարակության սրբազան պարտքն է, եւ որից շեղվելու դեպքում՝ խախտվում է աշխարհի ներդաշնակ կարգը:

Պահպանողականության հիմնարար արժեքներից են նաեւ *մասնավոր սեփականությունը եւ տնտեսական ազատակա-  
նությունը:*

Անշուշտ, վերոնշյալ գաղափարական-քաղաքական ուսմունքների հետ պահպանողականությունն ունի նաեւ որոշ ընդհանուր եզրեր, բայց դա հարցի կոնտեքստից դուրս է:

**Չարց**– Որքանո՞վ է մեր հասարակության համար ընկալելի պահպանողական գաղափարախոսության արժեհամակարգը:

**Պատ.**– Ընդհանրապես, *հայ հասարակությունը ե՛լ պահպանողական է, ե՛լ անընդհատ նորին ձգտող*: Նա հետամուտ է թե՛ իր բուն արժեքների պահպանմանը, թե՛ արդիականացումից հետ չմնալուն, նորը յուրացնելուն:

Սակայն, համաշխարհայնացման (գլոբալացման) արդի գործընթացները լուրջ մարտահրավեր են ազգային ինքնությանը եւ պետական ինքնիշխանությանը: Միաժամանակ, այսօր աշխարհում, լիբերալ-դեմոկրատական համակարգի ճգնաժամի եւ սոցիալիստական գաղափարների վարկաբեկման պայմաններում, զգալի վերելք է ապրում պահպանողականությունը:

Այս իմաստով, *պահպանողականությունը գաղափարախոսական հուսալի գեներ է ինչպես մեր հոգեւոր-մշակութային ինքնատիպությունը պահպանելու, այնպես էլ՝ համաշխարհային զարգացումներից հետ չմնալու առումով*: Ըստ այդմ, մեր հասարակության տարբեր շերտերին, համապատասխան քարոզչության դեպքում, այն ընկալելի է: